

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ ԳՐԱԻՐ ԿԸ ԴՆԷ ԱՐԱՔԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Նախագահ Կոր. Էմիլ Լահուտ երեկ իր լայնաբարություններուն մէջ շեշտեց, որ արաքական միասնականութիւնն ու զորութիւնը չեն իրականանար, եթէ արաք ղեկավարները նկատի չունենան իրենց ժողովուրդներուն պահանջները եւ չհամաձայնին գործակցութեան շուրջ:

Նախագահ Լահուտ երեկ ընդունեց սեուտցի բարձրաստիճան պաշտօնատար Խալէտ Ֆայսալ իշխանը, որուն հետ քննարկեց արաքական աշխարհը յուլոդ հիմնական հարցերը:

Նախագահ Լահուտ ընդունեց նաեւ Լիբանանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Վինսենթ Պեթլը, որուն յայտնեց Լիբանանի կեցւածքը տեղական եւ շրջանային իրադարձութիւններուն գծով:

Հանդիպումէն ետք Պեթլը ըսաւ, որ նախագահ Լահուտի փոխանցած է Իրաքի եւ Պաղեստինի մէջ տիրող կացութեան հանդէպ Ուաշինկթընի կեցուածքները: ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդի գումարելիք Ընդհանուր ժողովին պատրաստութիւնները, ինչպէս նաեւ Արաքական Լիկայի Խորհուրդի վեհաժողովին նախօրեակին արաքական երկիրներու արտաքին գործոց նախարարներուն հետ հաղորդակցութիւնները:

Ան աւելցուց, որ նախագահ Լահուտի հետ քննարկած է նաեւ Լիբանանի կացութիւնը եւ շեշտած՝ վայն կայունացնելու անհրաժեշտութիւնը, ինչպէս նաեւ երկրին տնտեսական տագնապը, բարեկարգումներու աշխատանքը եւ պետական փտածութեան դէմ ձեռնարկուած արշաւը:

Միւս կողմէ, նախագահ Լահուտ երեկ ուղղուեցաւ Հատաս, ուր այցելեց Լիբանանեան Համալսարանի նոր կառոյցին վայրը՝ ստուգելու համար նախնական աշխատանքները:

Նշենք, որ նշեալ կեդրոնը կառուցելու աշխատանքները սկսած էին 1997ին, ապա աշխատանքը շար.՝ էջ 9

ՄԸՐ ՕՐԻՆԱԿԱՆ ԿԸ ՆԿԱՏԷ ԱՌԻՆԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ՝ ԵՐԵՍՓՈՒՆԱՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԿԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ



Ներքին գործոց նախարար Էլիաս Մըր երեկ նախարարութեան կեդրոնատեղիին մէջ գումարեց երկու նիստեր՝ լիբանանեան հպատակութեան եւ Պապատա - Ալէյ երեսփոխանական մասնակի ընտրութիւններուն առնչուող:

Ժողովներէն ետք Մըր կատարեց լայնաբարություններ, որոնց մէջ յայտնեց, թէ հպատակութեան գծով կարգ մը դիմումագիրներ պիտի չընդունուին, որովհետեւ թղթածրարներու քննարկման ընթացքին յուրջ խախտումներ ի յայտ եկած են:

Անդրադառնալով Պապատա-Ալէյ ընտրութիւններուն Աունական շարժումի օրինական մասնակցութեան, Մըր յայտնեց, որ Աունական շարժումի թեկնածուն՝ Հիքմէթ Տիպ պաշտօնապէս կը մասնակցի երեսփոխանական ընտրութիւններուն, ինչ որ կը նշանակէ, թէ նշեալ կողմը կ'ուզէ մասնակցի դառնալ երկրին քաղաքական կեանքին՝ օրէնքի յարկին տակ:

Մըր աւելցուց, որ շարժումը օրինականութեամբ կ'ուզէ մուտք գործել խորհրդարան եւ կը յարգէ Թաէֆի համաձայնագիրը: Ան նշեց նաեւ, որ շարժումը կը յարգէ ապահովական կացութիւնը, ինչպէս նաեւ կը գործէ ժողովրդավարութեան սկզբունքով:

ՆՈՐՎԵԿԻԱՅԻ ՊԱՏՈՒԻՐԱԿ ՄԸ ՊԵՅՐՈՒԹԻ ՄԷՋ

Միջին Արեւելքի մէջ խաղաղութեան գործընթացի յատուկ պատուիրակ նորվեկացի ձեռնարկ Էլիաս Լիան երեկ այցելեց

արտաքին գործոց նախարար Ժան Օպէլտի, տեղեկատուութեան նախարար Միշել Սըմահայի եւ պաշտպանութեան նախարար Մահմուտ Համմուտի:

նէց, որ գոյութիւն ունին պաղեստինեալիստական տագնապի լուծման բանակցութիւնները վերակշիռ լոյսեր եւ կոչ ուղղեց արաքական երկիրներուն՝ յաւելեալ հետաքրքրութիւն ցուցաբերել խաղաղութեան ճամբու բարեկարգ գործադրելու աշխատանքին վերաբերեալ:

ԿՈՒՋՈՒՄ

●Այր մարդու շապիկ կարող փորձառու գործաւորուիներ: Դիմել՝ հեռ. 01-259196:

ԿԵՐԱՄՈՒՏ

Ս. ԽԱՆԱՄԻՐԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ (Ֆանար, հեռ. 891545)

1.- 2003-2004 ուսումնական տարեշրջանի արձանագրութիւնները կը շարունակուին մինչեւ 26 Սեպտեմբեր 2003, ամէն օր բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն, ժամը 8:30էն 12:30:
2.- Վերաքննութիւնները տեղի կ'ունենան հետեւեալ ժամանակացոյցով:
Երկուշաբթի, 22 Սեպտեմբեր 2003 Թիւ Երեքշաբթի, 23 Սեպտեմբեր 2003 Արաբերէն Գորեշաբթի, 24 Սեպտեմբեր 2003 Անգլ. եւ Շայլեզու
Կինգշաբթի, 25 Սեպտեմբեր 2003 Գիտ. եւ Շյո. Պոմ.
Վերաքննութիւնները տեղի կ'ունենան առաւօտեան ժամը 9:00ին:
3.- Օրոքաբի սպասարկութիւնը ապահովուած է բոլոր շրջաններուն համար:
4.- Յաւելեալ մանրամասնութեան համար դիմել տնօրէնութեան:
ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ՇՆՈՐՇԱԿԱԼԻԲ

Առաքելեան Կիլիւմեան ընտանիքներ շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով եւ նուիրատուութեամբ մասնակցեցան իրենց ամուսնոյն, հոր, եղբոր եւ հարազատին՝ ԱՍԱՏՈՒՐ ԱՌԱՔԵԼԵԱՆԻ մահուան եւ քառասունընթաց առիթով:

ՃԱՆՈՒ ԿՐՈՒՄ

●Այնճար, գիւղին մէջ, 4000 քառ. մետր տարածութեամբ, ջրհորով, կոյուղիով եւ քրիֆազէ ելեկտրականութեամբ: Դիմել՝ հեռ. 03 - 207772:

ԾԱԽՈՒ ԼՈՂԱՇԵՐՏ

●Այնճար, գիւղին մէջ, 4000 քառ. մետր տարածութեամբ, ջրհորով, կոյուղիով եւ քրիֆազէ ելեկտրականութեամբ: Դիմել՝ հեռ. 03 - 207772:

ՃԱՆԿԵՐՈՅԹ - ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Ելոյթ կ'ունենայ
ՓՕԼ ՊԱՂՏԱՏԼԵԱՆ
Մասնակցութեամբ
ԽԱՋԻԿ ՄԱԼԽԱՍԵԱՆԻ ԵՒ ԻՐ ՆՈՒԱԳԱՆՈՒՄԲԻՆ
Հիր երգիչ՝ ՄԱՆՈՒԿ ՄԻՆԱՍԵԱՆ
ԸՆԱԲԱԹ, 13 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2003, «Նապրհ Այնճար» ճաշարանին մէջ:
Սակ՝ 35 եւ 40 \$
Տոմսերը ապահովել Սթիւտիո Խաչիկ Մալխասեանէն, «Տիւրքեք Եանկ»-էն եւ «Նապրհ Այնճար» ճաշարանէն: Ըեռ. 08 - 620590, 03 - 790623:

ՄԱՀԱԶԴ

Տէր եւ տիկին Յակոբ Յակոբեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Հրայր Յակոբեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Մկրտիչ Տարազեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Վրէժ Աճեմեան
Օրդ. Սօսի Յակոբեան
եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր եւ հարազատին՝

ՎԱՐԴՈՒՇԻ ՅԱԿՈԲԵԱՆԻ

(Ծնեալ՝ Տիգրանակերտ, 1923ին)
մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 3 Օգոստոս 2003ին, Մոնրէալ, Քանատա:
Յուղարկաւորութեան արարողութիւնը տեղի ունեցաւ Շաբաթ, 6 Օգոստոս 2003, Մոնրէալի Ս. Յակոբ Մայր եկեղեցոյ մէջ:
●Ներկայս ընդունիլ իբրեւ մահագոյ:

ՄԱՀԱԶԴ

Տիկին Մարիամ Հաւանճեան եւ զաւակները՝
Յովիկ եւ Յակոբ
Տիկին Վարդանուշ Քէչիշեան եւ զաւակունք
Տիկին Կիւլէն Փարթաւեան եւ զաւակունք
Օրդ. Սիւլվա Փարթաւեան
Տէր եւ տիկին Սարգիս Վարժապետեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Նազարէթ Հաճընեան եւ զաւակը
Տէր եւ տիկին Յովհաննէս Ղուկասեան եւ զաւակունք
եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, քեռայրին, աներոջ եւ հարազատին՝

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԼՆԱՆՃԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Երկուշաբթի, 8 Սեպտեմբեր 2003, առաւօտեան ժամը 2:30ին, յետ կարճատեւ հիւանդութեան:
Յուղարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ նոյն օրը, կէսօրէ ետք ժամը 2:00ին, Նոր Մարաշի Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Պոլսը Համուտի Ազգային գերեզմանատունը:
●Ներկայս ընդունիլ իբրեւ մահագոյ:
●Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Զալթա, Ամարէթ Շալիուպ, «Անի» շէնք, ճրդ յարկ:

ԱԶԳԱՅԻՆ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ ՓԱՌԱՏՕՆ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՏՕՆԱԽՄԵՌՈՒԹԻՒՆ
Կ'երգէ սիրուած երգիչ ԳՕԳՕ ԹԻԹԻՆՃԵԱՆ, մասնակցութեամբ՝ աւանդական տիոլ գուռնային:
Տեղի կ'ունենայ Շաբաթ, 13 Սեպտեմբեր 2003, երեկոյեան ժամը 10:00էն սկսեալ, Մուսա Լեռան հերոսամարտի յուշարձանին կողքին:
Ը. Յ. Դ. «ԿԱՐՄԻՐ ԼԵՈ» ԿՈՄԻՏԵԻ ԴԱՍԽԱՐԱԿՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՍՈՒՍԱ ԼԵՐԱՆ ՅԵՐՈՍԱՄԱՐՏԻ 88ԱՄԵԱԿ
Հ. Յ. Դ. «ԿԱՐՄԻՐ ԼԵՈ» ԿՈՄԻՏԵԻ ԴԱՍԽԱՐԱԿՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ ԱՂԱՍԻ (ՊՕՂՈՍ ԹԱՍԼԱՔԵԱՆ)
Արուեստի գործերու ցուցահանդէսին բացումը տեղի կ'ունենայ Ուրբաթ, 12 Սեպտեմբեր 2003, երեկոյեան ժամը 7:00ին, «Սարգիս Չէյթեան» ժողովրդային տան մէջ:
Խօսք կ'առնէ
ԴՊԿՏ. ՍՈՎԱՍԵՍ ԾԻՐԱՆԻ (ՇԵՐԿԵԼԵԱՆ)
ԾԱՆՕԹ.- Յուգահանդէսը բաց է մինչեւ Կիրակի, 14 Սեպտեմբեր 2003ի երեկոյեան:

Հ. Յ. Դ. «ԿԱՐՄԻՐ ԼԵՈ» ԿՈՄԻՏԵԻ ԴԱՍԽԱՐԱԿՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ ՄԵԾԱՐԱՆՔԻ ԵՐԵԿՈՅ
Մուսալեռցի ակամաւոր գրագետ-քննադատ
ՊՕՂՈՍ ՍՆԱՊԵԱՆԻ
գրական գործունէութեան 50ամեակի առիթով:
Խօսք կ'առնեն՝
ԿԱՐՕ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ
ԵՒ **ՅԱԿՈԲ ՀԱԻԱԹԵԱՆ**
Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 12 Սեպտեմբեր 2003, երեկոյեան ժամը 8:30ին, «Գալուստ Կիլիպեան» սրահին մէջ:

ՀԱՆԴԻՍԱԿՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ-ԽԱՉՎԵՐԱՅԻ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ
Կիրակի, 14 Սեպտեմբերին, Խաչվերացի տօնին առիթով Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ պիտի պատարագէ եւ քարոզէ՝
ԳԵՐԸ. Տ. ՆԱՐԵԿ ԵՊՍ. ԱԼԵՍԵՂԵԱՆ
Պիքֆայայի Ս. Աստուածածին մատրան մէջ պիտի պատարագէ եւ քարոզէ՝
ԳԵՐՊ. Տ. ՆՈՐԱՅՐ Ծ. ՎՐԴ. ԱՇԸԳԵԱՆ
Ս. պատարագին պիտի նախագահէ՝
Ն. Ս. Օ. Տ. Ս. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԿԻՈՅ
Կը հրաւիրենք հաւատացեալները՝ հոգեպէս վերանորոգուելու Սուրբ Խաչի խորհուրդով:
ԴԻՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «Բ. ԿԱՆԱՉԵԱՆ» ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԶՈԼԵՃ
ԿԵՐԱՄՈՒՏ
Համագայիցի «Բ. Կանաչեան» Երաժշտական Զոլեճի 2003-2004 տարեշրջանի արձանագրութիւնները կը սկսին 15 Սեպտեմբերին եւ կը շարունակուին ամէն օր բացի Շաբաթ օրերէն, կէսօրէ ետք ժամը 3:00էն 7:00: Վերանուտ՝ 13 Ընկտեմբեր:
ԾԱՆՕԹ.- Յաւելեալ մանրամասնութեան համար դիմել երաժշտանոցի քարտուղարութեան. հեռ. 01-265899 եւ 01-249375:

2003-2004 ՏԱՐԵՇՐՉԱՆԸ՝ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՉԻ ՏԱՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՉԸ՝ ԲՈՒՈՐ ՆԱՅ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱՔԱՐԵԱՆ, ԱՔՍՈՐ ԳԱՍԱՐՃԵԱՆ, ՔԱՌԱՍՆԻՅ ՄԱՆԿԱՆՅ, ՍՈՒՐԷՆ ԽԱՆԱՄԻՐԵԱՆ, ՌՈՒԲԻՆԵԱՆ ԵՒ «ՅԱՌԱՋ» ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՉՆԵՐՈՒՆ 2003-2004 ՏԱՐԵՇՐՉԱՆԻ ԿՐԹ-ԱԹ-ՈՇԱԿԸ ԱՆՎՃԱՐ

«ՄՈՒՄԷՅԷՉՈՒՆ»

Լիբանանեան մշակութային առօրեային քաղ-
լած ձեռնարկի մը մասին է ակնարկութիւնը:
Կազմակերպուած էր մրցանք մը, նախաձեռնու-
թեամբ «Էլ. Պի. Սի.» պատկերասփիւռի տնօրէ-
նութեան: Երկար ամիսներու վրայ տեւած
մրցանք մը որ կը պատկերասփուռէր յիշեալ
պատկերասփիւռէն, ամէն երեկոյ, լրատուական
հաղորդումէն ետք:

Մրցումը դրուած էր դատական յատուկ յանձ-
նախումբի մը հսկողութեան ուշադրութեան
ներքեւ: Մրցման կը մասնակցէին գլխաւորաբար
արական սեռէ պատանի թէ երիտասարդ անձեր:
Մատի վրայ կը համրուէին իզական սեռի մաս-
նակիցները:

Մրցանքը ունէր բազմերես թեմա, այլազան
մարզեր շօշափող նիւթեր. պատմական, գիտա-
կան, երաժշտական, գրական, մարզական, ուսու-
ղական եւ այլ բնոյթի նիւթեր:

Ձեռնարկուած յայտագիրը այդքան ալ հանե-
լի չէր թուրքած պատկերասփիւռ դիտողներուն
մօտ, որովհետեւ թեման լուրջ էր ու մարդիկ
վարժուած էին թեթեւ յայտագիրներ դիտելու:
Բայց...

Երեքշաբթի 2 Սեպտեմբերի երեկոյեան ժամը
9:00 - 11:00ի միջեւ, աւելի քան երկու ժամ գոր-
ծադրուեցաւ մրցանակաբաշխման յայտագիրը:
Նախ հանգէս եկան պրոնզէ յուշանուէր եւ գրա-
մական պարգեւ ստացողները, 57 երիտասարդ-
ներ, (բացառութիւն էր միայն մէկ պատանի):
Ապա կարգը եկաւ արծաթ եւ ոսկի խորհրդա-
նշանակն ունեւորուող եւ գրամական պարգեւի:

Հետաքրքրական էր նոյն ատեն մրցանակա-
բաշխութեան մասնակից անձնակազմին ներկա
յուրերը. ոչ միայն «Էլ. Պի. Սի.» անձնակազ-
մը ներկայ էր, այլեւ պետական դեմքեր, ինչպէս
նախարար Սիմիոն, արուեստագետներ, լիբա-
նանեան ծանօթ անուներ, ու մինչեւ իսկ անց-
նող երկու տարիներու Լիբանանի գեղեցկուհի-
ները՝ Նորմա Նաում եւ Մարի - Ժոզէ...

Մրցանակի տուգումները կատարեցին հիւրե-
րը, զոյգ զոյգ հրաւիրուելով:

Այսպէս լրատուական յիշատակում մը կա-
րելի է նկատել: Այս ձեռնարկէն քաղցիք դար
ուսանելի է: Հանրութեան ուշադրութեան յանձ-
նել երկրին բոլոր շրջաններէն յատուկ ձիրքեր
ուներող սերունդը, «Մուսէյէզուլ»ները, այ-
սինքն՝ բացառիկները, ըսենք գերագանցները:

Հայկական մեր իրականութեան մէջ տեղի
կ'ունենան մրցանքներ, զանազան մարզերու
մէջ: Մամուլով կը յայտարարուին անոնք, օրի-
նակ «Ազգակ»ի կազմակերպած ընդհանուր գար-
գացման մրցումը, որ ստեղծեց որոշ հետաքրքր-
ութիւն: Գրական թէ մշակութային այլ կարգի
մրցումներ եւս ունինք, ինչպէս՝ դաշնակ «Մար-
կո Պապիկեան» մրցումը: Այս նախաձեռնու-
թիւնները գնահատելի են, քաջալերական, մղում
կու տան ստեղծագործական ջանքերու: Երանի
թէ մենք եւս ունենայինք նիւթական լայն կարե-
լիութիւններ, քաջալերելու եւ ծափահարելու
համար մեր բազմաթիւ շնորհալիներուն, տա-
ղանդաւոր գաւակներուն: Միւս կողմէ, պատկե-
րասփիւռի ակալութիւնը եղաւ զօրաւոր խթան
մը այս մրցանքը յաջողութեամբ պատկերու:
Լիբանանեան տեղական չափանիշով ծափա-
հարելի են «Մուսէյէզուլ»ները հեռանկարային
նման ձեռնարկներով կը կազմաւորուի նոր սե-
րունդը, որ չի գարգանար միայն համակարգ չա-
յին խաղերով, այլ հաւաքական մրցումներով,
քաջալերական վարձատրութիւններով, որոնք
պիտի առաջնորդեն դէպի նոր գիտելիքներու
եւ ընդհանուր գարգացման, առողջ դաստիարակու-
թեան նամբանքով:

Հետամուտ ըլլալով նոր սերունդին «գերա-
զանցները» ընտրելով երկու յայտագիրներու...

ՀԱՎԱՆԴՈՒԽՏ

ԴԵՍԵՐ - ԴԵՊԵՐ - ԴԱՏՈՒՄՆԵՐ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ԿԵԱՆՔԻ
ԿԵՆԴԱՆԻ ՅՈՒՇԱՐՁԱՆՆ Է

Հայ գրականութեան
լեզուական, լեզուաբանա-
կան, մեթոտարանական,
քերականական ու բառա-
բանային առաջադրանք-
ներէ մղուած՝ Յարութիւն
Քիրքեան լոյս ընծայեց
վերջին ժամանակներու իր
գրական մտորումներու
եւ անդուլ ուսումնասի-
րութեան արգասիքը հան-
դիսացած եւ 330 էջերու
մէջ ամփոփուած «Հայ
կեանք եւ գրականու-
թիւն» ծաղկուն հատորը,
որ կ'ընդգրկէ մօտ 60 Հայ
գրագէտներու հատըն-
տիրներ, գրականութիւ-
նը, բանաստեղծութիւնը,
մշակոյթը, վէպը, երգի-
ծանքը, ընկերային քննա-
դատութիւնը, ծաղրա-
նկարները, առօրեայ
կեանքի բնաբաններ, վիշ-
տեր, տենչեր, պայքար-
ներ, այլասերած ընկե-
րութիւն, բնանկարներ,
սպորտներ, նահանջող
ձգտումներ, արժէք ու
աւանդներ, մէկ խօսքով՝
անցեալի փորձը եւ
վաղուան ուղին մարդկա-
յին ժամանակագրութեան
մը հարստանքով կամըջե-
լու երէկու վաղուան Հայ
թէջ օտար գրականութեան
կայարանները:

Հատորին մէջ ձգտում
ու երազ կայ: Այդ ձգտու-
մը կը զանազանէ աշակեր-
տին զգացած ուսումնա-
տենչական գիտելիքներու
ապահովութիւնը՝ գրա-
կան արեւելումի ու կողմ-
նորոշումի, Հայ կեանքը
յուշելու, յուշեցնելու պատ-
գամներ ստանալու տա-
րագումի ակնկալու-
թեամբ:

Հեղինակին իսկ հաս-
տատումով՝ գիրքի մեթո-
տային մշակումին անգը-
նահատելի նպաստ բերած
են՝ տիկին Շարիկ Փա-
փազեան - Մկրտիչեան
(Պէյրուս) եւ պոէզ. Գրի-
գոր Պրլտեան (Փարիզ),
անոր սկզբնական տարբե-
րակներէն կարողով ծա-
ւալուն մասեր, կատարե-
լով բնաբաններ ու տքնա-
շան քննարկում: Իսկ
իրենց խորհուրդներով
օգտակար հանդիսացած
են՝ տիկին Լուսին Մալի-
բան (Մարսէյ), տիկին
Մայտա Մանոյեան-Բա-
րուսեան (Լոս Անճելես),
Գէորգ Գանտահարեան
(Պէյրուս), Յարութիւն
Պէյրուսեան (Մոնրէալ),
Նազարէթ Արանեան (Լոս
Անճելես), Կարապետ Տա-
բէսեան (Փարիզ-Նիդը-
րլանդ):

Հեղինակը կ'ըզգափա-
կէ՝ «Թէ՛ այս գործը ունի
առաւելութիւններ՝ առի-
նուած, բայց նոր աւանդ-
ներ ստեղծող ուսում,
տպագրական արդի ձեւա-
ւորումով, անտիպ արժէ-
քաւոր լուսանկարներով:
Սոցցումով պատկերներ,
որոնց մէջ ընթերցողը կը
զտնէ՝ վայր, լեզու, ոգի,
էութիւն: Գրականու-
թիւնը կ'զգի որ կը նմանի
որ իրարու միացած է
փոքրիկ, ծուռ ու մուր
ճամբաներով. ճամբաներ՝
որ շուտ կը վերջանան, ու-
րիշներ աւելի հեռուն կը
տանին. ճամբաներ՝ որոնց
կու տաս քու ուզած
անունը, որոնց մնայուն
կամ ժամանակաւոր ճա-
նապարհորդն եւ. ճամբա-
ներ՝ որ կեանք ունին կամ
ամայի են, տաք են ու
պաղ, երբեմն երեւելի, եր-
բեմն անհայելի, երբեմն
առասպելային, միխիթա-
րող, կեանք ստրկեցնող,
կեանք կերտող:

Բարեխղճօրէն ժամա-
նակ վատնուած է, ժամա-
նակ արժեւորելի ցանկա-
ցող մարդոց ու մանա-
նանդ գրականութեան հա-
կում ու ծարաւ ունեցող
երկրորդական բաժնի Հայ
աշակերտութեան համար:

րացումը, կամ նախընտ-
րութիւնները»: Այս կէ-
տին վրայ առաւելաբար
կը կայանայ հեղինակի
դասազբի մը պատրաս-
տութեան լաւագոյնին
ձգտող վերլուծական կա-
տարելութեան բծա-
խնդրութիւնը:

Սովորական չէ. շատեր
չեն ըներ այդ յղումը:
Ընողներու նախաձեռնու-
թիւնը սակայն, կը յան-
գեցնէ հրատարակչական
յաւելեալ ճաշակի, մատչե-
լիութեան, մէկ խօսքով՝
մանկավարժական ըզ-
մակողմանի ընկալելիու-
թեան հակադրութիւն: Գրա-
կան շարքերը աւանդու-
թեան վրայ հիմնուած են:
Աւանդութիւնը՝ մեթոտի
մը վրայ. հին թէ նոր, լա-
ւագոյն պարագային՝ ժա-
մանակագրականօրէն
միաձուլուած կերպարով:

Գրականութիւնը իրա-
կան ու հարողական կ'ըլ-
լայ երբ դասական է ու
միաժամանակ արդիա-
կան: Գրականութիւն սի-
րելու համար երբեք գրա-
գէտէն ամբողջովին զոհ
պէտք չէ ըլլալ, ինչպէս
նաեւ, իրեւ ընթերցող՝
անձէր: Հեղինակը կը գրէ
երէկի համար, վաղուան
համար, կեանքի առաքի-
նութիւններու եւ պայ-
քարներու համար:

Յարութիւն Քիրքեանի
հայ կեանքի գրական
ընտրանին նկատի առած է
այս բոլորը, եթէ պէտք է
սխտողսով, կամ անտիտ-
ղոս. գլխարկով, կամ
գլխազուրկ: Թող որտեղ
թիւրիմացութիւն չստեղ-
ծեն, ոչ ալ արտառոց հե-

տաքբերութիւն: Գրական
մեղուակեթակ մը,
յուշագրութիւններով լի
աշխարհաքաղաքացի
ժամանակակից մարդուն
համար, որ մնայուն կամ
գնայուն է այս կեանքէն,
բռնագրօսիկօրէն շրջա-
պատուած, կամ...
ազատօրէն շրջապատ-
ուած:

Հայ գրականութիւնը
մեր կեանքի կենդանի յու-
շարձանն է. զարմացնող,
վիրաւոր, վերականգնող,
բայց՝ վայլուօրէն պատ-
մական: Ազգութիւն ունի,
բայց իր սահմանները բա-
ցած է ազգութեանէն

գուրս:
Մեր գրականութիւնը
ցաւով ու յեղափոխու-
թեամբ յորդուէն է: Եր-
կունքն ալ ժառանգուած,
բայց մեր պատմութեան
ու կեանքի կշռոյթին
պատշաճեցուած: Որ հայ
կեանքը բերած է հոն, ուր
կը գտնուի այսօր: Ահա՛,
լուծումը: Նաեւ՝ նուա-
ճումը:

Փայլք մը՝ գրականու-
թեան որակի վեճ ու սպի-
տակ ցոյացումով:

ՅՈՒՍԷՓ
ՊԱՐԱՉԵԱՆ

ՉԵՐ ՏԵՍԱԿԵՏԸ ԿԱՐԵՒՈՐ Է

«ՎԱՆԱՅ ՉԱՅՆ»ԷՆ ԱՄԷՆ ԵՐԵՎԱՆԻ
ԼՍԵՅԷՔ «ՏԵՍԱԿԵՏ» ՅԱՅՏԱԳԻՐԸ

Երեքշաբթի, 9 Սեպտեմբեր 2003ին, կէսօրէ ետք
ժամը 5:00ին «ՏԵՍԱԿԵՏ» յայտագրին նիւթն է

«ԱԶԳԱՅԻՆ ԿԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒՆ
ԱՆԱԿԱԿԱԼԸ»

Կը խօսին՝
ՇԱՂԻԿ ԽԻՒՏԱՒԵՐՏԵԱՆ
ՎԵՐԱ ՍԻՍԵՌԵԱՆ
ՅԱԿՈՒ ԼԱՏՈՅԵԱՆ
ՅՈՒՎԻԿ ՊԵՐԹԻՉԼԵԱՆ

Յայտագրին ամբողջ տեւողութեան հեռաձայնեցէք
«Վանայ Չայն»՝ 241199 եւ 267567 թիւերուն,
ու տուրք ձեր կարծիքը:

www.hamazkayin.com

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «Բ. ԿԱՆԱՉԵԱՆ»
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԲՈՒԼԵՃ

ԿԵՐԱՍՈՒՏ

Համազգայինի «Բ. Կանաչեան» Երաժշտա-
կան Բոլէճի 2003-2004 տարեշրջանի արձանա-
գրութիւնները կը սկսին 15 Սեպտեմբերին եւ կը
շարունակուին ամէն օր բացի Շաբաթ օրերէն,
կէսօրէ ետք ժամը 3:00էն 7:00: Վերամուտ՝ 13
Նոյեմբեր:
ԾԱՆՕԹ.- Յաւելեալ մանրամասնութեան հա-
մար դիմել երաժշտանոցի քարտուղարութեան.
հեռ. 01-265899 եւ 01-249375:



ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ
ՍԱՐՔԵՐՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ




- AT HOME
•Wheelchair
•Walker
•Electric Bed
•Manual Bed
•Water Mattress
•Cans
•Sticks
•Serum Tripod
•Walking Frame

- Over Bed Table
•All Kinds Of Oxygen
We Also Provide
•Laboratory service.
•Physiotherapist
•Nurses Aids
•P.T.S. (AMBULANCE)

ՑՈՒՑԱՍՈՐԸ՝ «ԱՐԻՆ» ՍԵՆՁԵՐ
ԳՐԱՍԵՆՏԻԿ՝ ԱՖՀԻԼ, ԱՖԵՏԻ ԾԵԼԵ, Բ. ՅԱԿ
ԵՆԱ. (01) 242553/7


NO MATTER WHAT YOU NEED...
... OR WHERE YOU NEED.



ԱՐՈՒԷՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱՅ Է

ՍԱՐՈ ԳԵՎԵՐԵԱՆ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ
«ՆԱԽԵՆՏԵՐԵԻ Է ԿԱՆԽԵԼ ԸՄՆ ԴԱՐՄԱՆԵՆ»

Առողջապահական գիրքը



- Ինչպէ՛ս վերագտնել
Առողջութիւնը
- Ինչպէ՛ս խուսափիլ...
• Սրտային
հիւանդութիւններ
• Երկկամի
հիւանդութիւններ
• Յիշողութեան
ղժուարութիւններ
• Զաղկելու

ԱՊՐԱՊՈՎԵՅԷՔ
ԶԵՐ ՕՐԻՆԱԿԸ
ԱՅՍՕՐ
ՐՈՂՈՐ
ԳՐԱՍԵՆՏԵՐԵՆ

ՆԱՅՈՐԻ ԸՄԱՐՁՈՒՄԻՆ
ՑՈՒՑՆԵՐԸ
ՍԵՊՏԵՄԲԵՐԻՆ
ԳՈՒ. 44354

NURSING
ՓՈԼԻԿԼՈՅ ԲՈՒԼԵՃԻ ՆՈՐՈՒԹԻՒՆԸ

Եթէ աւարտած ես միջնակարգի 9րդ դասարանը,
դիմացող կը բացուի NURSINGի ասպարէզը:
Լաւագոյն ասպարէզը,
լաւագոյն վճարումով,
անմիջական գործի
ասպահովումով:



Մեծ է պահանջը, քանի որ
իրաքանչիւր 16 բժիշկի՝
ՄԷԿ հիւանդապահուի:
ԾԱՆՕԹ.- Առաջին տարուան համար
պիտի ընդունուին
սահմանափակ թիւով աշակերտներ:
Արձանագրութիւն՝ ամէն օր:


ՓՈԼԻԿԼՈՅ ԲՈՒԼԵՃ.- Տորա՛ հեռ. 01/251320

ՏՈՔԹ. ԶԻՍՏ ՆԸԺԷՅՄ
«ՎԱՆԱՅ ՉԱՅՆ»ԷՆ

Երեքշաբթի, 9 Սեպտեմբեր 2003, կէսօրէ ետք
ժամը 3:00ին քաղաքական եւ ընկերային յայտա-
գիրներու հաղորդավար ՏՈՔԹ. ԶԻՍՏ ՆԸԺԷՅՄ
պիտի պատասխանէ ՀԱԼԱ ՇԱՍՏԱՍԻ հարցումնե-
րուն՝ պատկերասփիւռի պատասխաններն իր բացա-
կայութեան տուն տուող պատճառներուն մասին:

«ԱԶԳԱԿ»Ի
ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ

«ԱԶԳԱԿ»ի հետ կապուելու համար հեռաձայնել
հետեւեալ թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:



bezdig_mezdig@hotmail.com

ՀԱՅ ԴԱՏ

ՀԱՅ ԴԱՏ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱԶՄԱՆ ՀԱՄԱՐ ԲԱԻԱՐԱՐ ՀԻՄՔԵՐ ԿԱՆ ԿԸՍԵ ԿԱՐԱՍ ԱՐԱՆԵՍԵԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ 12 ԱՄԵԱԿ

ՇՆՈՐՀԱԽՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՉՆԵՐ ԵՒ... ՌԱԶՄԱՏԵՆՉ ՅԱՅՏԱՐԱՐԹԻՒՆՆԵՐ

«Ազադ Արցախ» օրաթերթը վերջերս հրատարակեց հարցազրույց մը Լեռնային Ղարաբաղի Ազադյան Ժողովի Արարախի Յարաբերութիւններու Յանձնախումբի նախագահ Վահրամ Արարախի հետ: Հարցազրույցը առաւելաբար կեդրոնացաւ Լեռնային Ղարաբաղի անկախութեան 12 ամեակին, միջազգային համայնքին կողմէ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան ճանաչման, ինչպէս նաեւ Լեռնային Ղարաբաղի անկախութեան շուրջ: Մտորել կը ներկայացնենք հարցազրույցէն բաժիններ:

ՀԱՐՑՈՒՄ. - Ձեր կարծիքով, ի՞նչպէս էին անկախութեան 12 տարիները մեր ժողովուրդին համար:

ՊԱՏԱՍԽԱՆ. - Թերեւս մէկ նախադասութեամբ կարելի է ըսել, թէ ինչ տուած է 12 տարիներու անկախութեանը մեր ժողովուրդին: Իւրաքանչիւր ժողովուրդի մեծագոյն փափաքն է իր պատմական հայրենիքին մէջ պետական անկախութիւն եւ ինքնիշխանութիւն ունենալ: Մենք այդ ճանապարհին արդէն բաւական էական նշանակէտեր ունինք եւ այդ ուղղութեամբ պէտք է ընթացանք մինչեւ վերջ՝ դէպի Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան միջազգային ճանաչում:

Հասարակութեան մէջ կը հասունանայ այն մտածողութիւնը, որ Լեռնային Ղարաբաղի գոյութիւնը Ազրպէյճանի տիրապետութեան տակ մնալուն վտանգ է ոչ միայն Ղարաբաղի, այլ՝ Ազրպէյճանի համար: Այլեւս կարելի չէ այս երկու պետական կառույցներուն գոյակցութիւնը այն ձեւով, ինչպէս եղած էր նախապէս: Մեր դիւանագիտութեան ջանքերը եւ շրջանին մէջ աշխարհաքաղաքական զարգացումները թոյլ կու տան յուսալու, որ մենք ի գործ ենք հասնելու մեր պետական անկախութեան միջազգային ճանաչման՝ խաղաղ բանակցութիւններու ճամբով: Իսկ եթէ այս գործընթացը անընդունելի նկատուի Ազրպէյճանի այն ուժերուն կողմէ, որոնք օրն ի օրն կը խօսին Լեռնային Ղարաբաղի նկատմամբ զինուորական միջոցներով վերահսկողութիւն հաստատելու մասին, ապա երեւի մենք այս պէտք է անգամ մը եւս պատրաստ ըլլանք մեր անկախութեանը եւ ինքնիշխանութեանը համարժէքօրէն պաշտպանելու:

այսօր եւս կը շարունակուի: Հիմնական դրուժեամբ չեմ կրնար ըսել, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը տնտեսապէս կայացած անկախ պետութիւն է: Յամենայնդէպս կը դժուարանամ հարցին շուրջ դատողութիւններ ընելու: Ընդամենը կրնամ ըսել, որ մենք կրնայինք տնտեսապէս աւելի նպաստաւոր վիճակի մէջ ըլլալ, քան այսօր, եւ եթէ այդպէս չէ, կը կարծեմ, որ բոլորս յանցաւոր ենք այդ գծով: Ասիկա իմ անձնական կարծիքն է:

Հ. - Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը ունի անկախ պետականութիւնը փաստող բոլոր տուեալները: Բայց թերեւս տարակուսանք կը պատճառուի, թէ ցարդ մեր պետութիւնը ինչո՞ւ է չունի իր հիմնական օրէնքը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Սահմանադրութիւնը:

Պ. - Աշխարհի մէջ կան կայացած, նոյնիսկ հազարամեայ պատմութիւն ունեցող պետութիւններ, որոնք միջազգային իրաւունքի իրաւ ենթակա են: Ինչպէս որ մինչեւ անգամ իրենք իրենց թոյլ կու տան որոշելու այլ ժողովուրդներու ճակատագիրը, սակայն սեփական սահմաններու վերաբերյալ ինչո՞ւ են ինչո՞ւ ցարդ երկրի մը համար կարեւորագոյն օրէնքը չէ ընդունուած, կը դժուարանամ ըսելու: Միայն գիտեմ, որ մեր երկրին մէջ կայ սահմանադրական յանձնախումբ մը, որ երկար ժամանակ աշխատած է եւ կ'աշխատի: Քննարկուած են սահմանադրական կարգի քանի մը տարբերակներ. այդ աշխատանքը այսօր ալ կը շարունակուի: Այլ խնդիր է որ գործընթացը պէտք է արագացուի: Ըստ այս, փափաքելի կ'ըլլար Սահմանադրութիւն ընդունիլ ոչ թէ Ազգային Ժողովի մէջ, այլ՝ Համաժողովրդական հանրապետութիւն: Կը կարծեմ, որ մինչեւ, յաջորդ նախագահական ընտրութիւնները՝ 2007 թուական, նպատակայարմար կ'ըլլար ունենանալ մեր սեփական սահմանադրութիւնը:

Հ. - Ձեր կարծիքով, մեր դիւանագիտութիւնը իր ստեղծումէն մինչեւ ներկայ ժամանակները կրցած է ձեռնարկել Լեռնային Ղարաբաղի միջազգային ճանաչման ուղղութեամբ հաջողակ քայլեր:

Պ. - Յիշեալ քայլերը աւելի աշխուժ եղած են Մայիս 1994ի զինադադարէն ետք, որովհետեւ մինչ այդ երկիրը կարելիութիւն չուներ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան միջազգային ճանաչման ուղղութեամբ դիւանագիտական աշխուժ գործունէութիւններ ծախելու: Այս քայլերը իրականութեան մէջ առաջին հայեացքէն լայն հասարակութեան համար կրնան անբարձր թուիլ: Կը հասկնամ հարցին խորքը: Բայց գիտե՞ք, որ դիւանագիտութիւնը չի կիրարկուել հասարակական լայն շրջանակներուն համար եւ ոչ ալ դիւանագիտութեան մէջ պէտք է ըլլան ամբողջակամբութեան տարրեր: Որքան որ տեղեկ եմ, ես կը վստահեցնեմ, որ մեր երկրի արտաքին քաղաքականութիւնը գլխաւորող մարմինները՝ արտաքին գործոց նախարարութիւնը եւ հանրապետութեան նախագահը, որ ի պաշտօնէ կ'ուղղէ այդ համակարգը, կատարած են արդիւնաւէտ քայլեր՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան միջազգային ճանաչման հասնելու ուղղութեամբ: Մեր երկրի միջազգային ճանաչման համար բաւարար հիմքեր կան:

Հ. - Աճեցողութիւնը ճշմարտութիւն է, որ քաղաքական անկախութիւնը կը ծնի տնտեսական անկախութիւն: Միեւնոյն ժամանակ, տնտեսական անկախութիւնը կ'ամրապնդէ ծախսերը: Ձեր տպաւորութեամբ, մօտ ապագային կարելի է Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը ցկայան տնտեսապէս կայացած անկախ պետութիւն:

Պ. - Մեր հանրապետութեան հուշակոմբը գուցա հեռ ընթացքով Ազրպէյճանի կողմէ Լեռնային Ղարաբաղի դէմ պատերազմական գործողութիւններուն: Պատերազմի ընթացքին մենք տնտեսական մեծ վնասներ կրեցինք: Յայտնի է, թէ զինադադարի հաստատումէն ետք ինչ հսկայական միջոցներ ներդրած է երկրի գոնէ անհրաժեշտ ընկերային ենթակառուցյանը: Բայց Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան միջազգային ճանաչման հասնելու ուղղութեամբ: Մեր երկրի միջազգային ճանաչման համար բաւարար հիմքեր կան:

ԹՈՒՐԵԱ

ՀԱՅԱՐԱՆԱԿ ՄԻԱԿ ԳԻՒՂԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ ԽԱՐԻՈՒԹԵԱՄԲ ԿԸ ԽՆՈՒՄԵՆ...

Պոլսոյ «Մարմարա» օրաթերթը 4 Սեպտեմբերին ահագանցեց, թէ Թուրքիոյ տարածքին կանգուն մնացած հայաբնակ միակ գիւղէն՝ Վաքըֆէն թրքական իշխանութիւնները խաբէութեամբ խլած են մօտակորպէս 50 հեկտար հողատարածք: Արդարեւ, ըստ գիւղացիներուն պնդումին, բնակիչները վերջին օրերուն խաբէութեան նկատմամբ կործանուած են իրենց պայենական հողերը:

Դէպքը գարգացած է հետեւեալ կերպով: ամիսներ առաջ, Սամանտաղի քաղաքապետը փնտրած է Վաքըֆէ

2 Սեպտեմբերին մեծ շուքով նշուեցաւ Լեռնային Ղարաբաղի անկախութեան 12ամեակը: Այս առիթով, Միացեալ Նահանգներու Քոնկրէսի Հայկական Հարցերու Խմբակցութեան նախագահներ Յրէնք Փալոն եւ Ճօ Նոլընպըրը շնորհակարարական ուղերձ մը յղեցին Լեռնային Ղարաբաղի ժողովուրդին եւ նախագահին՝ յայտնելով. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Անկախութեան Հռչակագրի մէջ նշուած է, որ Ազրպէյճան հայկական բնակչութեան նկատմամբ խտրականութեան քաղաքականութիւն վարած է, նաեւ ընդգծուած է այս եւ ազրպէյճանցի ժողովուրդներուն միջեւ բարի դրացիական յարաբերութիւններու վերականգնման եւ մարդկային իրաւանց հռչակագիրը յարգելու անհրաժեշտութիւնը: Այդ պատմական փաստաթուղթը ընդունելով, Արցախի խիզախ ժողովուրդը արտայայտեց ազատ ապրելու եւ իր ճակատագրի տէրը ըլլալու վճռականութիւնը: Դիւրին չէր ազատութեան ճանապարհը: Ո՛չ խորհրդային Միութեան տարիներու հալածանքները, ո՛չ Ազրպէյճանի յարձակողապաշտ դիրքորոշումը, ո՛չ աւերիչ պատերազմին հետեւանքները, ոչ ալ Ազրպէյճանի կողմէ շարունակուող շրջափակումը կրցան տկարացնել ձեռ վճռականութիւնը: Եւ այսօր՝ 2 Սեպտեմբերին, մենք կրկին կը հիանանք ձեր անկուր ոգիին վրայ եւ կը շնորհակարարեմք ձեզ՝ Անկախութեան Օրերուն առիթով: Մենք կ'ողջունենք Լեռնային Ղարաբաղի ժողովրդավարական հիմնարկներու ամրապնդման եւ շուկայական տնտեսութեան զարգացման ուղղութեամբ ձեր վճռականութիւնն ու ջանքերը: Լեռնային Ղարաբաղը ապացուցած է, որ կը հանդիսանայ միջազգային հանրութեան լուրջ եւ յուսալի գործընկերը: Ռազմավարական կարեւոր նշանակութիւն ունեցող Հարաւային Կովկասի մէջ խաղաղութեան եւ կայունութեան հաստատման մէջ ձեր աւանդը չափազանց էական է եւ արժանի՝ ամէնէն բարձր գնահատանքին: Անգամ մը եւս կը հաւատարացնեմք ձեզ, որ մենք այսուհետեւ եւս աշխուժօրէն պիտի աջակցինք Լեռնային Ղարաբաղի անվտանգութեան եւ զարգացման»:

Լեռնային Ղարաբաղի անկախութեան տօնին առիթով շնորհակարարական ուղերձով հանդէս եկած է նաեւ Ս. Փեթերսպուրկի Օրէնսդիր Ժողովի նախագահ Վատիմ Տուլպանով, որ նախագահ Արկադի Դուկասեանի յղած իր հեռագրի մէջ յայտնած է. «Ս. Փեթերսպուրկի Օրէնսդիր Ժողովի պատգամաւորներուն անունով կը շնորհակարարեմ ձեր Անկախութեան Տօնը: 12 տարի առաջ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան կազմաւորման մասին որոշում ընդունուած էր, ինչ որ կարելիութիւն ընձեռեց բնակիչներուն՝ իրենք զիրենք զգալու ժողովրդավարական եւ զարգացող հանրապետութեան մը ազատ եւ անկախ քաղաքայինները: Հանրապետութիւնը ունի հզոր ներուժ, հարուստ պատմութիւն եւ մշակութային աւանդութիւններ: Ձեզ կը մտադրեմ հետագայ բեղմնաւոր աշխատանք՝ ի շահ հանրապետութեան, ստեղծագործական ուժեր՝ ծրագրիներու յաջող իրականացման համար»:

ՊԱՔՈՒ ԶԱՐԱՅԱՏ

Միւս կողմէ, սակայն, «Արմէնփրէս» կը տեղեկացունէ, թէ մինչ Պաքո հանգիստ վերաբերմունք ցուցաբերած է Երեւանի եւ Լեռնային Ղարաբաղի մէջ տեղի ունեցած անկախութեան հանդիսութիւններուն նկատմամբ՝ զանոնք նկատելով «ներքին քարոզչութիւն», Ազրպէյճանի նախագահի աշխատակազմի արտաքին յարաբերութիւններու ղեկավար Նովրուզ Մահմետով զարմանք յայտնած է Ս. Փեթերսպուրկի Օրէնսդիր Ժողովի նախագահի վերոյիշեալ շնորհակարարական ուղերձին նկատմամբ: «Արտաքին գործոց նախարարութիւնը կը ստուգէ հայկական լրատուամիջոցներու այդ տեղեկութիւնը եւ եթէ ան իրականութեան համապատասխան է, նախարարութիւնը անպայման լրջօրէն կ'արձագանգէ եւ համապատասխան բողոքի յայտարարութիւն կը կատարէ Ռուսիոյ իշխանութիւններուն», լրագրողներուն յայտնած է Մահմետովը:

ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵԱԼ ԿԸ ՔՆՆԱԳԱՏԵ ՄԻՆՍՔԻ ԽՄԲԱԿԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՆԹԻՒՆԸ

3 Սեպտեմբերին պաշտօնական այցելութեան մը համար Պաքո հասած է ԵԱՀԿի Մինսքի խմբակի ռուս նոր նշանակուած համանախագահ Եուրի Մեդվեդկով, որ օդակայանին մէջ լրագրողներուն յայտնեց, թէ պիտի ծանօթանայ խաղաղութեան բանակցութիւններուն եւ անոնց նկատմամբ Պաքոյի դիրքորոշման: Ազրպէյճանի «Ինթերֆաքս» լրատու գործակալութեան համահայտնեց, թէ Մեդվեդկով չէ պատասխանած այն հարցումին, թէ արդեօք Ազրպէյճանի «Հողային ամբողջականութեան» Լեռնային Ղարաբաղի հիմնադրութիւնը լուծման հիմնական սկզբունք է: Ան միայն յայտնած է, որ ինք կը պաշտպանէ նախագահ Փուկինի դիրքորոշումը եւ կը հաւատայ, որ յաջողութիւնը եւ պարտուողներ պիտի չըլլան:

Ռուս համանախագահը հանդիպում մը ունեցած է Ազրպէյճանի վարչապետ Իլհամ Ալիեւի հետ, որ նշած է, թէ Պաքո համանախագահներէն կը սպասէ նոր նախաձեռնութիւններ, որոնք պիտի նպաստեն տաքսիով ընդունելի լուծման: «Ազրպէյճանի մէջ որոշ չափով հիասթափած ենք այն բանէն, որ Մինսքի խմբակը վերջին ժամանակներս կը փորձէ մեկուսանալ հարցի գործնական լուծումէն», յայտնած է Ալիեւը: Նշելով, որ «առանց Մինսքի խմբակի գործուն մասնակցութեան, դժուար կ'ըլլայ Ղարաբաղեան խնդրին լուծում գտնելը: Ան դիմելով լուծման է, թէ վերջին տարիներուն Ազրպէյճանի եւ Ռուսիոյ միջեւ յարաբերութիւններու զարգացումը հիմք կու տայ յուսալու, որ Մոսկուա կ'աշխուժացնէ

ղարաբաղեան տաքսիով արդարացի լուծման իր ջանքերը»:

Հանդիպումին ընթացքին Ազրպէյճանի վարչապետը բացատրած է Հայաստանի հետ տնտեսական համագործակցութեան կարելիութիւնը՝ այնքան առեւ, որ «չեն ազատագրուած Ազրպէյճանի բռնագրաւուած տարածքները»:

Եուրի Մեդվեդկով իր կարգին յայտնած է, թէ 15 Սեպտեմբերին վիեննայի մէջ տեղի պիտի ունենայ Մինսքի խմբակի համանախագահներուն հերթական հանդիպումը, որուն ընթացքին պիտի քննարկուին տաքսիով լուծման նոր գաղափարներ:

Ինչ կը վերաբերի համանախագահներու շրջան կատարելիք այցելութեան, ռուս դիւանագետը յայտնած է, թէ ան կրնայ տեղի ունենալ Նոյեմբեր - Դեկտեմբերին՝ Ազրպէյճանի 15 Հոկտեմբերի նախագահական ընտրութիւններէն ետք:

Նշեց, որ Եուրի Մեդվեդկով վերջերս փոխարինեց Նիքոլայ Կրիպոզով, որ ԵԱՀԿի Մինսքի խմբակի ռուս համանախագահի պաշտօնը վարած էր աւելի քան 4 տարի:

ԱԼԵՍՔԵՐՈՎ ԵՒՍ ԿԸ ԲՈՂՈՔԸ

Ազրպէյճանի խորհրդարանի նախագահ Մուրթուզ Ալեքսեբերով Պաքոյի մէջ տեղի ունեցած բրիտանացի խորհրդարանականներու հետ իր հանդիպումին ընթացքին, անհանգստութիւն յայտնած է Մինսքի խմբակի «անգործութեան» նկատմամբ՝ դիտել տալով, որ ան «պատշաճ» ուղղորդութիւն չի դարձնել լուծման գործընթացին եւ «տաքսիային լուծման ուղղութեամբ լուրջ քայլերու չի ձեռնարկել»:

ԲՈՂՈՔԻ ՀՄԻՄՔ

Այսպէս կոչուած «Ղարաբաղի Ազատագրութեան կազմակերպութիւն» 3 Սեպտեմբերին Պաքոյի մէջ Միացեալ Նահանգներու դեսպանատան առջեւ բողոքի ցոյց մը կազմակերպած է: Ըստ «Ձեռքբալ» թերթին, բողոքի շարժումները հանդիսանալով «վերջերս ըսնկէսականներու յաճախակի դարձած այցելութիւնները Ղարաբաղ»:

Յուզարարները դիտել տուած են, թէ այդ այցելութիւնները եւ «ինքնահռչակ հանրապետութեան ղեկավարութեան հետ վարած բանակցութիւնները անարգական վերաբերմունք են Ազրպէյճանի օրէններուն նկատմամբ: Անոնք պահանջներ են, որ Միացեալ Նահանգներու պետական եւ կառավարական մարմիններու ներկայացուցիչներուն Լեռնային Ղարաբաղ բոլոր այցելութիւններուն համար արտօնութիւն ստացուի Ազրպէյճանի համապատասխան առեւտրային:

ՀԱԼԱՔԵՐՈՎ ԵՒՍ ԿԸ ԲՈՂՈՔԸ

Հաւաքին մասնակիցները բողոքած են նաեւ Ղարաբաղեան տաքսիով գծով Ուաշինկիթընի վարած քաղաքականութեան դէմ: Անոնք Միացեալ Նահանգներէն պահանջած են Հայաստանը ճանաչալ իբրեւ «նախալարձակ» եւ անոր դէմ պատժամիջոցներ կիրարկել...

ՆԱԽԱԳԱՀՆՈՒԹԵԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆ ՊԱՏՐԱՍԵ ՌՈՒՄՈՎ «ՎԵՐԱԳՐՉՆԵՆՈՒ» ՂԱՐԱԲԱԿ

Ազրպէյճանի նախագահական թեկնածուներէն Հաֆիզ Հաճիբ 3 Սեպտեմբերին պատկերասփուռի պետական կայանէն կոյտով ունենալով խոստացած է երկու տարիէն լուծել Ղարաբաղի հարցը: Ան յայտնած է, որ եթէ նախագահ ընտրուի, իր պաշտօնավարութեան առաջին տարուան ընթացքին կը շարունակէ բանակցի հայեցողութեան հետ, բայց յաջորդ տարի պարզուի, որ բանակցութիւնները արդիւնք չեն տար, կը հրամայէ օգտագործել բանակը եւ ուժով վերադարձնել Ղարաբաղը:

ՍՊԱՆԻՈՅ ԱՐՔՈՒՆԻՔԻՆ ԱՐԶԱԳԱՆԳԸ՝ ՀԱՅԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԳԻՐԻՆ ՄԱՍԻՆ

Սպանացի հեղինակ Կոնսալո Կուարչ 2002ին «Հայկական Տոհմածառ» խորագրով Հայկական Ցեղապայանութեան նուիրուած գիրք մը հրատարակած էր: Հայրենի «Ազգ» օրաթերթը կը տեղեկացնէ, թէ Սպանիոյ եւ Փորթուգալի մէջ Հայաստանի դեսպան էտուարտ Խոնջոյեան այդ գիրքէն օրինակներ տուէր յղած է Սպանիոյ թագաւորին: Իբրեւ պատասխան, Սպանիոյ արքունական դիւանի քարտուղար Ռիքարտո Տիէզ-Օլիէտոն Ռոտորիկէս է վարչապետ Խոսէ Մարիա Ասնար թագաւորին անունով շնորհակալական նամակներ յղած են դեսպանին՝ ողջունելով հրատարակութիւնը:

Միջապային Քաղաքական Կեանք

ՔԱՍՏԻ ՓԻԼԻՍՈՓԱՆԵՐԸ ՓՈԹՈՐԻԿ ԿԸ ԱՏԵՂԾԵՆ

Իրաքի մէջ վարագուծութեան սաստկացումը տրամաբանական հետեւանքն է Պուշին վարչաձեռքեան յետոյ 2001ին առած այն որոշումին, թէ հաւաքակազմութիւնը զինուորական հարց մըն է եւ պէտք է ունենայ զինուորական լուծում: ադիտալի պարզացումը մը:

11 Սեպտեմբեր 2001ի յարձակումներուն հետ կապ չունեցող երկու իսլամ պետութիւններու՝ Աֆղանիստանի եւ Իրաքի դէմ յարձակումը միլիտանտոր իսլամներու մօտ ձգեց այն տպաւորութիւնը, որ տազանապարհ Նահանգներուն եւ իսլամներուն միջեւ էր:

Երկու պատերազմներն ալ չկործանեցին «Քախտա», այլ ընդհակառակը՝ շատցուցին անոր համակիրները: Միացեալ Նահանգները աւելի ապահով չեն այսօր:

Պատերազմները երկու երկրներուն մէջ սպանութիւններու դաշտերը բացին, որոնք ոչ ոք գիտէ ինչպէս պէտք է վերցուին եւ որոնց մէջ գոհերը ընդհանրապէս ամբողջապէս ուժեղ են: Սկզբնականում այդպիսի բան պէտք էր պատահեր:

Սպանութիւնը միակողմանի էր 11 Սեպտեմբերին: «Քախտա» ամբողջապէս եւ ուրիշներ սպաննեց Նիւ Եորքի եւ Ուաշինկթընի մէջ, իսկ 2001ի վերջերս եւ 2002ին սեղի վեռնեցած սպանութիւնները մեծ մասամբ միւս ուղղութեամբ էին: Զոհերը թալեպանի զինուորներ, «Քախտա»ի անդամներ եւ Քաֆան զինեալներ էին անհամար թիւերով:

Այս տարին այնոյն ձեւով սկսեալ, բայց հարցերը փոխուած են: Ամերիկացիները իրենց օդային սահմաններէն եւ արհեստագիտական միջոցներով չէ որ կը ուժեղանան Իրաքը, անոնք գետնին վրայ են՝ 23 միլիոն իրաքցիներուն մէջ եւ ենթակա են յանկարծակի եւ անորոշ յարձակումներու: Այս պատճառով ալ ամերիկեան բանակը կը փորձէ խուսափել վերթնամի պատերազմին վնասներուն կրկնութենէն:

Տեսանելի յաղթանակ չկալ գետնի վրայ: Եթէ Սատտամ Ղաթուֆն ձեռնարկայալուրի կամ սպաննուի, Ուաշինկթըն յաղթանակ պիտի հռչակէ, բայց այդ մէկը պիտի չըլլայ յաղթանակ հարեկըութեան դէմ: Վերականգնուած տնտեսութեամբ գործուն ժողովրդավարութեան մը հաստատումը Իրաքի մէջ կրնայ յաղթանակ սեպելի, սակայն այդ մէկը իրազործելու հաւանականութիւնը հեռու է՝ նոյնիսկ եթէ երկիրը խաղաղի:

Այս արդիւնքը նախատեսուած էր, սակայն ուշադրութեան հարձականքը Ուաշինկթընի մէջ նոր պահանջողականներուն ծրագրերին արմատական ըլլալուն պատճառով այս ծրագրերը որդեգրուեցան: Նախապէս ձորձ Պուշին կողմէ, որ տեղեակ չէր անոր աղբիւրներէն, նպատակներէն կամ ենթադրութիւններէն:

Նոր պահանջողականները կը հաւատան, որ

կործանումը կ'արտադրէ ստեղծագործութիւն: Անոնք կը հաւատան, որ ճգմելով եւ տիրելով կը յաղթեն: Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոն այդ ոճով կը գործէ, հակառակ անոր որ նոր պահանջողականները պէտք է տեսած ըլլային, որ «ճգմել եւ տիրել» ու քաղաքականութիւնը ոչ մէկ յաղթանակ իրագործած է Լիբանանի կամ պարզաստիւնեան հողերուն վրայ:

Անոնք կը հաւատան, որ Միացեալ Նահանգները իսկական առաքելութիւն մը ունին՝ կործանել անիրաւութեան ուժերը: Անոնք նաեւ կը հաւատան, եւ ստիկա իսկապէս իրենց մեծագոյն երազանքն է, թէ այդ կործանումը ազատ պիտի արձակէ ազատութեան եւ ժողովրդավարութեան բնական ուժերը:

Իրենց այս վերջին համոզումին մէջ անոնք ազդուած են մարքսական գաղափարախօսութեան ընդհանրապէս ընդդէմ, որ մտաւորական ենթահողը հանդիսացաւ նոր պահանջողական շարժումին: Սակայն անոնց դրոյսափայլը նաեւ շատ ամերիկեան է՝ նկատի առնելով, որ անոնք հաւատաւոր հետեւորդներն են Ուոլտըր Ուիլսոնին՝ զոյապաշտ երազական կատարելապաշտ մը, որ իսկապէս կը հաւատար, որ ինք Աստուծոյ կողմէ զրկուած էր աշխարհը աւելի լաւ տեղ մը դարձնելու համար:

Անոնք կը նմանին դաշնակցային պահեստի պատասխանատու Ալան Կրինսփանին, որ 1997ին զարմանք արտայայտեց վաղաք զրամատիրութեան գծով, որ ծայր առած էր նախկին խորհրդային Միութեան մէջ եւ որ մինչեւ այսօր գոյուցութիւն ունի շրջանին մէջ, ան նշեց, թէ ինք կը կարծէր, որ համայնավարութեան անկումով «ինքնաբերաբար ձեռնարկութիւններու ազատ շուկայակն համակարգը պիտի հաստատուէր»:

Փոլ Ուոլֆովից, Ռիչըրտ Փրըլլ եւ Ուաշինկթընի նոր պահանջողական իրենց միւս պաշտօնակիցները ենթադրեցին, որ Սատտամի վարչակարգը կործանելով անմիջապէս

ազատական ժողովրդավարութիւն պիտի հաստատուէր Իրաքի մէջ: Սակայն ժողովուրդի մը կառուցները փճացնելը ոչ թէ երազային փոփոխութիւն այլ կործանում կը յառաջանէ հակառակը մտածելը պատճառ կը դառնայ, որ ոմանք վարեն համաշխարհային պակասութիւն եւ պառակտումներ ստեղծող արտաքին քաղաքականութիւն մը, որ կը ստեղծէ քաղաքական քաոս, մարդկային տառապանք եւ յաւելեալ վայրագութիւն ու հաւաքակազմութիւն, որոնք կը դիմադրեն ամերիկացիներուն եւ անոնց դաշնակիցներուն:

Ինչպէս կարելի պիտի ըլլայ վերականգնել իրաքը: Ուաշինկթընի ղեկավարը, ուրիշ կառավարութիւններ կամ միջազգային հիմնարկութիւնները օժանդակել վերակառուցման աշխատանքներուն:

Ինչ է որդեգրուած ռազմավարութիւնը: Երբեք այդ գոյուցութիւն չունէր այդ մէկը: Ուաշինկթընի քաոսի փոխափաները, որոնք ստեղծեցին այդ կացութիւնը, համոզուած են, որ ընդհանրապէս հակադրուածութիւն մը կայ իրենց ձախողութեան՝ հարցերու բարդացում եւ նոր յարձակումներու ճամբով ցնորական յաղթանակի իրազործում աշխարհի ուրիշ մասի մը մէջ:

Ուաշինկթընի քաղաքացիները կը տեսնեն նաեւ ուրիշ հաւանականութիւն մը՝ գտնել եւ սպաննել Սատտամը, ապա՝ պարզապէս հեռանալ Իրաքէն, որուն անհանդարտ եւ ապերախտ ժողովուրդը, ինչպէս Պուշ կրնայ յայտարարել, արժանի չեղաւ ամերիկեան ջանքերուն:

Ասիկա անհաւանական կը նկատուի այսօր: Եթէ Իրաքի իրավիճակը վատ մնայ մինչեւ 2004, երբ նախագահը իր թեկնածուութիւնը պիտի ղնէ նախագահական երկրորդ ժամանակաշրջանի մը համար, ապա այդ հաւանականութիւնը նկատի պիտի առնուի:

ՌԻԼԻԵՄ ՓՅԱՅ
«Ինքըրնէշընը Էներլի Թրիպիոն»

ՀԱՅԱԲՆԱԿ ՄԻԱԿ ԳԻՒՂԻՆ ՏԱՐԱՉՔՆԵՐԸ...

Ծայրուակուած՝ 5րդ էջէն

գիւղի թաղապետը եւ յայտնած է, թէ գիւղի սահմաններուն մէջ գտնուող թափուր հողերը կը փափաքի ընտանիքներու միջեւ բաժնել: Այս որոշումէն մեկնելով, ան խնդրած է, որ մօտաւորապէս 50 արտավար հող քաղաքապետութեան փոխաճուրդի: Ասոր համար ալ պահանջած է, որ գիւղի իմաստուններուն խորհուրդը գայ եւ համաձայնագիր մը ստորագրէ: Գիւղի պարզամտ գիւղացիներն այդ գաղտնի ստորագրած են այդ համաձայնագիրը՝ առանց ամբողջ բովանդակութեան տեղեակի ղառնալու: Հետագային ստուգուած է, որ քաղաքապետը փոխանակ 50 տեքարի (տեքար - 1000 քառակուսի մետր), 50 հեկտար տարածութիւն զբաղեցնող ստորագրելու տուած է գիւղացիներուն...

Վերոյիշեալ նիւթին մասին տեղեկութիւն քաղելու համար «Մարմարա» կապ հաստատած է Պոլսոյ հայոց պատրիարքութեան հետ, որ իր կարգին յայտնած է, թէ տեղեակ է ղէպէն եւ թէ՛ տեղական, թէ՛ կեդրոնական կառավարութեան հետ շփումներ պիտի հաստատէ՝ ստուգելու համար հարցին ընդթիւր եւ համապատասխան լուծում մը ապահովելու:

Նշենք, որ Թուրքիոյ հայարնակ միակ գիւղը՝ Վաքըֆը, կը գտնուի նախկին Արեւմտային Նահանգին մէջ: Ան ունի 100 ընտանիք եւ մէկ կեկոյցի:

ՊՈՒԵՒ ԶԱՆՈՂՈՒԹԵԱՆ ՂԱՏԱՊԱՐՏՈՒԹ ՊԱՏՐԱՆՔՆԵՐԸ

ԺՈՒՎՈՒՄԻՐԻ ԿՐՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԵՄԻՆ

Իրաքի մէջ հարուածը կը հասցնեն կոկորդին: Երկու շաբաթ առաջ, զո՞ր ՄԱԿի գլխաւոր ներկայացուցիչն էր, անցեալ շաբաթ՝ ամէնէն ազդեցիկ շիբ կրօնականներէն մէկը: Ինչպէս կ'ըսէին Լիբանանի պատերազմին ընթացքին եթէ բաւարար մարդիկ մահը կը ցանկան, ուրեմն պիտի մեռնիս: Ուրեմն ո՞վ կը ցանկար արդեօք Այաթոլլա Մուհամմէտ Պաքը Հաքեմի մահը: Կամ, աւելի ճշգրիտ ըլլալու համար, ո՞վ հոգ պիտի ընէր, եթէ ան մեռնէր: Անշուշտ, առկայ է «Սատտամի մնացորդներ» նշանաւոր վարկածը, որոնց վրայ կը նետեն յանձնաք Հաքեմի հարազատները: Վերջապէս, Սատտամի հետեւորդներու կողմէ շարժարանքի ենթարկուած էր ան, եւ Հաքեմի Իրան ապաստանելէն ետք Սատտամ ամէն տարի անոր ազգականներէն մէկը կը սպաննէր, անոր քուք վերադառնալ պարտադրելու յոյսով: Կան նաեւ քուէյթցիներ կամ սէուեցիները, որոնք չեն ուզեր, որ իսլամական Յեղափոխութեան Գերագոյն խորհուրդը իրենց սահմանակից Իրաքի մէջ որեւէ ձեւի «իսլամական յեղափոխութիւն» մը կատարէ:

Միացեալ Նահանգներու մէջ նոյնպէս գոյութիւն ունին մեծ թիւով նէօ-պահանջողականներ, որոնք երբեք չվստահեցան Հաքեմի՝ հակառակ Իրաքի անցումային իշխանութեան հետ անոր կապերուն: Եւ վերջապէս, կան նաեւ շիիները:

Երկու մասի առաջ, կը լսէի Հաքեմի Ուրբաթ օրուան քարոզը, որ կը պահանջէր վերջ տալ անկլո-ամերիկեան ռուսագրաւումին եւ սակայն կը խօսէր խաղաղութեան մասին եւ կոչ կ'ընէր իրաքցի կիներու, որ իրենք եւս միանան Իրաքի նորակազմ բանակին: Չկարծեմ թէ ընտրու այս ամբողջ կողմից ենք՝ ականջիս փսփոսաց աղօթող մը:

Կայ նաեւ Սուբեթատա Սատր, երիտասարդ եւ շատ նուազ գիտակ կրօնական մը, որուն հօր նահատակութիւնը հերոսի աստիճանի բարձրացուց զայն եւ որ տե-

ւարար դատապարտած է Իրաքի բռնազրաւողներու հետ «Համագործակցութիւն»ը: Մուքթատա Սատր նուազ ծանօթ է իբրեւ Սատտամի ռեֆորմի հետ լուրեւայն գործակցող:

Այս բանավէճերէն աւելի խոր են Նաթաֆի կրօնականներու աստուածաբանական հարցերու լուրջ բանավէճերը: Նաթաֆի կրօնականներ երբեք չեն ընդունած «աստուածաբանական ղեկավարման» գաղափարը, զոր արտայայտած է Իրանի Այաթոլլա խուլէյնի: Հաքեմ խուլէյնին եւ անոր յաջորդող Այաթոլլա խուլէյնին անուանած էր «այրող իմամ»ը: Հաքեմ ինքզինք նմանցուցած էր նահատակուած իմամներ Ալիի եւ Հիւսէյնին:

Նաթաֆի բնակչութեան մեծամասնութիւնը չի հաւատար «այրող իմամ»ներու: Սակայն Նաթաֆի արիւնահեղութիւնը, եւ Մուհամմէտ Հաքեմի սպանութիւնը մէկ բան պիտի հաստատէ բոլորին՝ ամերիկացիք չեն կրնար հակակշիռի տակ առնել Իրաքը: Իրաքի մէջ ամերիկեան ուժերու դեկավար գօր. Ռիքարտո Օորնչէզ միայն 24 ժամ առաջ լուսած էր թէ յաւելեալ զօրքերու կարիքը չունի: Յստակ է, որ եթէ ան տրամադիր է վերջ տալու վայրագութեան, յաւելեալ ուժերու կարիքը կայ աւելի քան երբեք:

Որովհետեւ պատահածը ոչ միայն բռնագրաւման դէմ պայքարի ծիրէն ներս կ'իյնայ, այլ նաեւ սկիզբն է քաղաքացիական պատերազմի մը, որ արիւնքամ պիտի ընէ ամբողջ ժողովուրդ մը եթէ այդ երկրի նոր ղեկավարները չձերբազատին իրենց նէօ-պահանջողական պատրանքներէն եւ աշխարհի օժանդակութեան չդիմեն երկիրի ապագան ձեւաւորելու իրենց աշխատանքին մէջ:

ՌԱՊԸՐԹ ԻՆՍԻՏԻՏՈՒՏ

«Տի Ինտիփեյնըմը»

ԱՄԵՐԻԿԱՑԻՆԵՐՈՒՆ ԿՈՂՍԵ ԼԵՈՒԵԼԵ ԵՏԶ ԶՕՐԱՎԱՐՆԵՐԸ ԿԸ ԿՈՐԱՆՑՆԵՆ ԻՐԵՆՑ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ

ԱՐԴԵՕՔ ԹՐՔԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ Ո՞ՐԲ ԴԱՐՁԱԻ

Թրքական բանակի զօրավարները անցեալ շաբաթուան տեղորոշեցան կժոն քննադատութիւններու թիրախ դարձուցին «Արդարութիւն եւ Բարգաւաճում» կուսակցութեան քաղաքական ուղեգիրը, զոր սպառնալիք նկատեցին երկրին մէջ գոյութիւն ունեցող աշխարհիկ ժողովրդավարական կարգերուն ապագային: Այս քննադատութիւնները հնչեցին թրքական բանակի վերջերս հանգստեան կոչուած բարձրաստիճան սպաներու բերնէն: Այս ծիրին մէջ, ծովուծի հրամանատար Պիւլէնթ Ալիփաթա մատնանեց աշխարհիկ կարգերուն ներսէն եւ դուրսէն սպառնացող իսլամական ծայրայեղ հոսանքներու վտանգին խուսափութիւնը: Ան աւելցուց, որ բանակը պիտի չզիջի իր աւանդական կեցածքէն, պիտի շարունակէ պաշտպանել այս կարգերը եւ ժողովրդավարական հանրատնութիւնը:

Իսկ օրվուծի հրամանատար գօր. Ճոն Էնրի Ասպարուք եւ թրքական Ազգային ապահովութեան խորհուրդի ընդհանուր քարտուղար գօր. Թունճար Քըլընճ, որոնք նոյնպէս հանգստեան կոչուեցան, անուղակի կերպով կառավարութիւնը ամբաստանեցին երկրին մէջ գոյութիւն ունեցող աշխարհիկ կարգերուն վտանգ սպառնացող իսլամական ծայրայեղ հոսանքներուն եւ ծեղուած դրոնուներու նկատմամբ աչք խփելու յանձնարար: Այս բարձրաստիճան զինուորականները նաեւ «Արդարութիւն եւ Բարգաւաճում»ի ղեկավարները ամբաստանեցին երկրին մէջ գոյութիւն ունեցող կարգերուն նկատմամբ իրենց իրական կեցուածքը թաքցնելու յանձնարար:

«Արդարութիւն եւ Բարգաւաճում» կուսակցութեան ղեկավարները խուսափեցան բարձրաստիճան զինուորականներուն յայտարարութիւններուն պատասխանելէ, որովհետեւ անոնք արդէն իսկ հանգստեան կոչուած են: Մինչդեռ զանգուածային լրատուամիջոցները ծայրի ենթարկեցին այդ յայտարարութիւնները եւ ըսին, թէ բարձրաստիճան զինուորականները պէտք էր խօսէին հանգստեան կոչուելէ առաջ:

Չանգուածային լրատուամիջոցներուն այս կեցածքը եկաւ իբրեւ արդիւնք անոնց տէր եղող Այտըն Տողանի նման մեծ գործարարներու ցուցումներէն: Վերջինս սեփականատէրն է բազմաթիւ օրաթերթներու («Հիւրրիյէթ», «Միլիիյէթ»), պատկերասփիւռի կայաններու («Մի-էն-էն-թիւրք»), ռատիոկայաններու եւ պարբերականներու եւ կը վախճայ, որ կառավարութիւնը զինք նեղութեան մասնէ նիւթաւորական հարցերով, քանի որ ան տնտեսական յարաբերութիւններ ունի պետութեան հետ, ինչպէս նաեւ պետական դրամատուններուն պարտական է միլիոնաւոր տոյարներ:

Այս աղբիւրները կ'ըսեն, թէ կառավարութիւնը կրնայ որոշել բանակը ուղղորդել Իրաք՝ բարձրաստիճան զինուորականներուն արգիլելու համար ներքին քաղաքականութեան հարցերով զբաղելը, որպէսզի կառավարութեան կարեւորութեան ընձեռուի իրազործելու իր յայտնի ծրագրը, սահմանադրական կարգ մը յօդուածներուն եւ տարբեր օրէնքներու փոփոխութեան կամ բարեփոխման միջոցով: Այս մէկը կը նպատակադրէ ամբողջութեամբ ձերբազատիլ բանակին իրաւասութիւններէն՝ սպայակոյտի ընդհանուր հրամանատարութիւնը կապելով պաշտպանութեան նախարարութեան եւ բանակի շարժումները ղեկով խորհրդարանի հսկողութեան տակ: Տարբեր աղբիւրներ կը նախատեսեն, որ

Իրաք դառնայ բանակին եւ կառավարութեան միջեւ շարունակուող քաղաքականութեան եւ հակառակութիւններուն գլխաւոր նիւթ մասնաւոր Միացեալ Նահանգներուն պաշտպանութեան փոխ նախարար Փոլ Ուոլֆովիցի անցեալ Մայիսի սկիզբը թուրք լրագրողներուն կատարած յայտարարութիւններէն ետք, որոնց մէջ վերջինս թրքական բանակը ամբաստանեց Իրաքի դէմ ամերիկեան պատերազմին ընթացքին ամերիկեան ուժերու թուրքիոյ մէջ տարածման խորհրդարանի մերժումին ժամանակ պէտք եղած պատասխանատուութեամբ չչարժելու յանցանքով: Ասիկա բացատրուեցաւ այն իմաստով, որ Ուաշինկթըն այցելու չի կանգնիլ բարձրաստիճան զինուորականներուն ետին, որոնք աւելի քան 50 տարիէ ի վեր ծանօթ էին Ուաշինկթընի հետ մշակած իրենց անձնական եւ պաշտօնական կապերով: Բարձրաստիճան զինուորականները իրենց էին, որ կը խաղային հիմնական դերը ամերիկացիներուն հետ թրքական բարեկամական քաղաքականութեանց մէջ: անոնք նոյնը ըրին Իսրայէլի հետ, 1995էն ետք:

Այս ուղղութիւնը լուրջ հակազդեցութիւններ ստեղծեց ազգայնական զինուորական կարգ մը շրջանակներու մօտ, որոնք չեն հանդուրժեր, որ «Օսմանեան մեծ կայսրութեան ժառանգորդը եղող թրքական բանակին պէս զօրաւոր բանակ մը» երկրորդական երակատարութիւն ունենայ ամերիկեալիւրեան հասարակաց հաւասարակըութեանց մէջ, բան մը, որ թրքական բարձրաստիճան «ազգայնական» զինուորականներուն միեղ իրենց ուժերը զօրաշարժ ենթարկելու՝ այս գործընթացին դէմ դնելու համար:

Այս ընթացքին, եւրոպական մայրաքաղաքներ եւ հաստատութիւններ կը նեղացնէին օդակր թրքական կառավարութեան վրայ, ամէնէն արագ ժամանակամիջոցին կատարելու համար ժողովրդավարական բարեկարգումներ՝ իբրեւ գլխաւոր պայման Անգարայի Եւրոպական Միութեան անդամակցութեան բանակցութիւններուն սկսելուն: Այս իրողութիւնը օգտագործեցաւ կառավարութեան կողմէ, որ Եւրոպական Միութեան անդամակցութեան հարցին շուրջ կը վայելէ ժողովրդային զանգուածներուն զօրակցութիւնը: Կառավարութիւնը յաջողեցաւ բազմաթիւ բարեկարգումներ իրականացնել թուրք ժողովրդական զօրակցութեամբ: Եւ ժողովուրդը հանգիստ է «Արդարութիւն եւ Բարգաւաճում» կուսակցութեան կառավարութեան քաղաքականութեան մասնաւոր տնտեսական մարզին մէջ, որ անցնող քանի մը ամիսներուն ընթացքին զգալի բարելաւում մը արձանագրեց:

Միւս կողմէ, «Արդարութիւն եւ Բարգաւաճում» կուսակցութեան ղեկավարները մեծ ճկունութիւն ցուցաբերեցին բանակին յատուկ թիղթորարներուն նկատմամբ, որոնցմէ նշենք Ազգային ապահովութեան խորհուրդի ընդհանուր քարտուղարին հարցը: Հրատուան համաձայն գտնուեցաւ, որ տարի մը եւս ընդհանուր քարտուղարը մնայ զինուորական մը, հակառակ անոր որ Ազգային ապահովութեան խորհուրդի նոր օրէնքը ընդհանուր քարտուղարի պաշտօնը կը վերապահէ քաղաքային մը:

ՀԻՄՆԻ ՄԱՆԱԼԻ

«Մուսրաբպալ» (Յապարտումով)

ԿԵՆՍՈՒՆՈՐՏԱՅԻՆ

ԵՒՐՈՊԱՅԻ ՄԷՉ ՏԱՔԻ ԱԼԻՔԸ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԱՊԱԳԱՅ ՓՈՓՈԽՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ «ԶԳՈՒՇԱՅՈՒՄ ՄԸՆ Է», Կ'ԸՍԷ ՄԱՍՆԱԳԷՏ ՄԸ

ՄԱԿԻ կլիմայական փոփոխության հարցերու պատասխանատու գիտական գերագույն յանձնախումբին կողմէ յայտնաբերուած ընդհանրական ջերմացումի կապուած տուեալներ ցոյց տուած են, թէ 20րդ դարու վերջին 25 տարիներուն հետզհետէ աւելի տաք իրերայաջորդ տարիներ եւ 21րդ դարուն ընդհանրական ջերմաստիճաններու աստիճանական աճ արձանագրուած են:

Գիտնականներ ընդհանրապէս կը գզուշանան ըսելը, թէ այդ ջերմաստիճանները արդէն իսկ համաշխարհային կլիմային մէջ փոփոխութիւններ ընթացքի մէջ դրած են, դիտել տարով, որ տասնամեակներու վրայ տարածուող ուսումնասիրութիւններ միայն կրնան օգտակար իրաւունքներ տալ:

Այսուհանդերձ, այդ համախոհութիւնը անցնող քանի մը տարիներուն սկսած է «տապալիլ» Եւրոպայի, Մ. Նահանգներու եւ այլ վայրերու մէջ օդի ծայրայեղ դէպքերու լոյսին տակ եւ կարգ մը մասնագետներ գերկայիս բացայայտօրէն կ'ըսեն, թէ կլիմայի մարդու ձեռքով կատարուած փոփոխութիւններու նշաններ ցոյց կու տայ:

Փաշաուրի, որ հնդիկ է, դիտել տուած է, թէ մարդիկ յատկապէս տեղեակ են Եւրոպայի մէջ արձանագրուած չափազանց խիստ ամառուան մասին, սակայն, ըսած է ան, Հնդկաստան չափազանց տաք ամառ մը դիմագրաւած է այս տարի եւ հոն մեծ թիւով մահեր պատճառով են: Ըստ մասնագէտին, այդ երկիրը ցարդ այնքան բարձր ջերմաստիճաններ չէր դիմագրաւած:

Փաշաուրի, որ հնդիկ է, դիտել տուած է, թէ մարդիկ յատկապէս տեղեակ են Եւրոպայի մէջ արձանագրուած չափազանց խիստ ամառուան մասին, սակայն, ըսած է ան, Հնդկաստան չափազանց տաք ամառ մը դիմագրաւած է այս տարի եւ հոն մեծ թիւով մահեր պատճառով են: Ըստ մասնագէտին, այդ երկիրը ցարդ այնքան բարձր ջերմաստիճաններ չէր դիմագրաւած:

ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐՈՒ ԿՈՒՏԱԿՈՒՄՆԵՐՈՒ ԱՐԴԻՒՆՔ

Գիտնականին համաձայն, արձանագրուած տաքի ալիքը ժամանակի ընթացքին արտանետուածներու կուտակումներու հետեւանք է: «Մթնոլորտին մէջ ջերմանոցի կազմը ներկայիս միլիոնի մէջ 380 բաժին են: Ասիկա արդիւնք է անցնող 150 տարիներուն տեղի ունեցածներուն», ըսած է ան, աւելցնելով, որ մեծագույն բաժինը կու գայ անցնող 50 տարիներէն:

«Փաստերը կը թուին մատնանշել մարդկային տուեալներու, զխաւորաբար՝ ջերմանոցի կազմը կուտակումներու: Վտանգը այն է, թէ այս ծայրայեղ դէպքերը ապագային թափ պիտի ստանան: Հետեւաբար ասիկա գզուշանումը մըն է՝ ապագայի կլիմային մասին», ըսած է մասնագէտը:

ԵՒՐՈՊԱՅԻ ՏԱՐՈՐԻՆԱԿ ՀՈՒՆՉՔԸ Կ'ԱՐՏԱՅՈՒՆՆԵՐ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԵԱՆ ԳՃՈՎ ՆԱԽԱՏԵՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Եւրոպայի մէջ այս տարուան հունձքերու ձեռքբերման տարօրինակ ժամանակամիջոցները տեղական ծայրայեղ ջերմութեան, երաշտի եւ անձրեւներու հետեւանքով, կը հաստատուէ անցեալ տարուան նախատեսութիւնները, թէ ընդհանրական ջերմութիւնը Եւրոպայի մէջ երկրագործութիւնը «պիտի վերադասաւորէ», կ'ըսէ «Նիւ Սայընթիսթ» թերթը:

Եւրոպական Յանձնաժողովին Հետազոտութեանց Միացեալ Կեդրոնը Օգոստոսին հրապարակած է վիճակագրութիւններ, ըստ որոնց Հարաւային Եւրոպայի տարածքին հունձքերը կծկուած են, մինչ անոնք ան արձանագրած են հիւսիսային Եւրոպայի մէջ կորեկի եւ ճակնդեղի բեռները մէկ չորրորդով կրճատած են, իսկ Փորթուգալի մէջ ցորենի հունձքը մէկ երրորդով նուազած է:

Մինչ այդ Իրլանդիայի մէջ, ջերմ օդը ճակնդեղի բեռը մէկ չորրորդով աւելցուցած է, իսկ Դանիայի եւ Շուեդի մէջ՝ 5 առ հարիւրով:

Արտադրողականութեան մէջ արձանագրուած փոփոխութիւնը «գրեթէ ճիշդ» անցեալ տարուան նախատեսութիւնն է՝ կատարուած հողի երկու մասնագետներու կողմէ: Դանիացի մասնագետ Եորկըն Օլիսըն եւ իտալացի Մարքո Պիտի անցեալ տարի լոյս տեսած հետազոտութեան մը մէջ նախատեսած են, թէ հիւսիսային Եւրոպայի մէջ երկրագործներ արտասովոր կերպով առատ բեռք պիտի վայելեն շնորհիւ աւելի խոնարհ օդի եւ բնօրինական կազի աւելի բարձր համեմատութիւններու:

Հարաւային Եւրոպայի մէջ աւելի բարձր ջերմաստիճաններ եւ նուազ անձրեւ բեռները պիտի կրճատեն, վտանգ սպառնալով ամէնէն չոր շրջաններուն մէջ ինքնից երկրագործութեան գոյութեան իսկ. նախատեսած են հետազոտողները:

Անոնց հետազոտութիւնը սակայն հիմնուած էր 2050ին բնածխական կազի հաւանական համեմատութիւններու կապուած համակարգչային «մոտէլ»ներու վրայ եւ անմիջական ապագայի մասին նախատեսութեան չէր միտեր, ըստ «Նիւ Սայընթիսթ» թերթին:

Եւրոպայի մէջ Օգոստոսին արձանագրուած տաքի ալիքը կը թուի ջերմանոցի կազմը արտանետումներու արդիւնք ըլլալ: Ասիկա «գզուշացնող նշան մըն է», համաշխարհային կլիմայի ապագայ փոփոխութիւններու, յայտնած է ՄԱԿԻ կլիմայական Փոփոխութեան Միջկառավարական Յանձնախումբին ատենակալը՝ տոքթ. Ռահմանաբադ Փաշաուրի:

Յանձնախումբը գիտական հիմնաւորումներ կը հայթայթէ միջազգային եւ կառավարական քաղաքականութիւններու մշակումին՝ կասեցրնելու կամ նուազեցնելու համար ընդհանրական ջերմացումը:



Եւրոպայի մէջ չափազանց բարձր ջերմաստիճաններ մահացու բազմաթիւ հրդեհներ պատճառած են Օգոստոսին:

Փաշաուրի յայտնած է, թէ ցարդ կատարուած բոլոր ուսումնասիրութիւնները ցոյց կու տան, որ չափազանց բարձր ջերմաստիճանները բնական տուեալներու արդիւնք չեն:

Մինչ այդ Իրլանդիայի մէջ, ջերմ օդը ճակնդեղի բեռը մէկ չորրորդով աւելցուցած է, իսկ Դանիայի եւ Շուեդի մէջ՝ 5 առ հարիւրով: Արտադրողականութեան մէջ արձանագրուած փոփոխութիւնը «գրեթէ ճիշդ» անցեալ տարուան նախատեսութիւնն է՝ կատարուած հողի երկու մասնագետներու կողմէ: Դանիացի մասնագետ Եորկըն Օլիսըն եւ իտալացի Մարքո Պիտի անցեալ տարի լոյս տեսած հետազոտութեան մը մէջ նախատեսած են, թէ հիւսիսային Եւրոպայի մէջ երկրագործներ արտասովոր կերպով առատ բեռք պիտի վայելեն շնորհիւ աւելի խոնարհ օդի եւ բնօրինական կազի աւելի բարձր համեմատութիւններու:

Հարաւային Եւրոպայի մէջ աւելի բարձր ջերմաստիճաններ եւ նուազ անձրեւ բեռները պիտի կրճատեն, վտանգ սպառնալով ամէնէն չոր շրջաններուն մէջ ինքնից երկրագործութեան գոյութեան իսկ. նախատեսած են հետազոտողները:

Գիտնականներու համաձայն, երկրագունդը 1980էն ի վեր կը թուի աւելի տաք ըլլալ քան անցնող 18 դարերուն:

Բրիտանիոյ Իսթ Անկլիա համալսարանին կլիմայական հետազոտութեանց բաժանմունքին մասնագէտներէն փրոֆ. Ֆիլիպ Ժոնզ եւ Մ. Նահանգներու Վերջինիա համալսարանին դասախօսներէն փրոֆ. Մայքըլ Ման ընդհանրական կլիմայի վերականգնած են՝ սառույցէ, բուսականութենէ եւ այլ արձանագրութիւններէ ձեռք բերուած տեղեկութիւններու օգտագործումով:

Անոնց կարծիքով, իրենց հետազոտութիւնները ստոյգ կերպով կը հաստատեն, թէ մարդիկ կ'ազդեն կլիմային վրայ:

Սակայն թերահաւատներ կը շարունակեն պնդել, թէ մարդկային որեւէ մասնակցութիւն հաւանաբար չափազանց չնչին պիտի ըլլայ՝ բացատրելու համար տեղի ունեցածը:

ՄԱԿԻ կլիմայական Փոփոխութեան Միջկառավարական Յանձնախումբը՝ ուսումնասիրելէ ետք 1000 տարիէ ի վեր «արձանագրուած» ջերմաստիճաններու ընթացքը, վերջերս յայտնած է, թէ 20րդ դարու վերջին ժամանակամիջոցը ամէնէն տաքը եղած է:



Ղազախստանի սառցակոյտերը արագօրէն կը հալին վտանգ սպառնալով ո'չ միայն երկրի երկրագործութեան եւ բարգաւաճումին, այլ նաեւ ամոր քաղաքական կայունութեան, կ'ըսեն մասնագետները:

Փրոֆեսէօրներ ձոնգ եւ Ման որոշած են անցնող 2 հազարամեակներու ընդհանրական կլիմայի «վերականգնել», ստուգելու համար այն «հաստատումներ», թէ երկրագունդին ջերմութիւնը հետզհետէ աւելի բարձրացած է:

Անոնք քննած են տարբեր շրջաններէ հին ծառերու բունները՝ տեղական պայմաններուն մասին տեղեկութիւններ քաղելու համար: Մտածելով

ԵՐԿՐԱԳՈՒՆԴԸ 2000 ՏԱՐՈՒՄՆ ԶԵՐՄՈՒԹԵԱՆ ԳԱԳԱԹՆԱԿԷՏԻՆ ՆԱՍԱԾ Է

Րուս տարեկան աճումի օդակներուն հաստատութիւնը կը ճշդուի կլիմային կողմէ:

Անոնք նաեւ ուսումնասիրած են կրիւլանտի եւ Անթարքթիքայի մնացուցիկ կերպով սառած բաժիններէն փորձած ու զուր բերուած սառույցի գլանաձեւ բեկորներ, քննելով բնատարկուած օդի «պղպղակները», տեղեկութիւն քաղելու համար սառույցին կազմութեան ընթացքին գոյութիւն ունեցող կլիմային մասին:

Տեղեկութեանց երրորդ աղբիւր մը եղած է պատմական արձանագրութիւնները, յատկապէս Հոլանտայէն, Զուիցերիայէն եւ Զինստանէն:

պէս 3 կամ 4 առ հարիւրի կծկում կ'արձանագրուէ: Այս դարավերջին հիւսիսային բեւեռը ծածկող սառույց պիտի չգտնուի ամրան, ըսած է ան:

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԶԵՐՄԱՅՈՒՄԸ ՀԱՒԱՔԱԿԱՆ ՔԱՆՎՈՒՄԻ ԶԵՆՔ ՄԸ

Մարդու պատճառած ընդհանրական կլիմայի փոփոխութիւնը հաւաքական քանդումի գեղք մըն է՝ առնուազն ցոյց տալով վտանգաւոր որքան կորիզային, քիմիական կամ կենսաբանական գեղքերը, յայտնած է կլիմայի մասնագետ քրիտանացի գիտնական մը Յուլիսի վերջերս:

ՄԱԿԻ կլիմայական Փոփոխութեան Միջկառավարական Յանձնախումբի նախկին բանալի անդամ Զոն Զոքըն յայտնած է, թէ ընդհանրական ջերմացումի հետեւանքները այնպիսի են, թէ «որեւէ ձեռքով չեն տատանուիր գալիս իրեն հաւաքական քանդումի գեղք նկարագրելու»:

Ան ըսած է, թէ Մ. Նահանգներ մեծ համեմատութեամբ պատասխանատու են սպառնալիքին:

«Ահաբեկչութեան նման, այս գեղքը սահման չի գնահատուիր: Անիկա կրնայ հարուածել որեւէ տեղ, որեւէ ձեռքով տակ, տեղ մը տաքի ալիք մը, երաշտ մը կամ ողորում մը կամ մրրիկ մը այլ տեղ մը», յայտնած է Զոքըն:

Մ. Նահանգներ Մայիսին 562 թաթառներէ հարուած ստացած են՝ 41 գոհ խլիւղով, սակայն բարգաւաճման ընթացքի մէջ գտնուող երկիրները աւելի եւս մեծ հարուածներ դիմագրաւած են:

Օրինակ Հնդկաստանի մէջ այս տարի «մուսոն»ներէն առաջ ջերմաստիճանները 49 սառիճանց սելսիուսի հասած են, ինչ որ բնականէ 5 սառիճանց աւելի բարձր է: Տաքի այդ ալիքը միայն 1500 գոհ խլիւղ է: Զոքըն ըսած է, թէ ամենուրեք ծառեր, որ Մ. Նահանգներ պակասուող աշխարհի մեծագույն երկիրն են եւ թէ աշխարհի բնակչութեան մէկ քառերորդով, անոնք ջերմանոցի կազմը արտանետումներուն մէկ չորրորդ կ'արտադրեն:

Սակայն Մ. Նահանգներ կը մերժեն հարցին լրջօրէն մօտեցալ, յայտնած է ան:



Մասնագետներու համաձայն, ողորումներն ու երաշտը շատ աւելի ծանրակշիռ պիտի դառնան ապագային՝ ընդհանրական ջերմացումին պատճառով:

«Արդէն իսկ ստոր հետեւանքները կը կրենք: Իսկ ասիկա կ'առաջնորդէ այլ եզրակացութեան մը. նոյնիսկ եթէ այսօր մեծ համեմատութեամբ կրճատումներ կատարենք, կլիմայական փոփոխութիւնը քանի մը տասնամեակ պիտի շարունակուի: Ասիկա աւելի եւս կենսական կը դարձնէ այսօր իսկ այս գծով քայլերու դիմելու առաջարկը», շեշտած է Փաշաուրի:

Բնականաբար, տաքի մէկ ալիք փաստ չէ թէ աշխարհ աւելի կը ջերմանայ, սակայն Օգոստոսի տաքը մաս կը կազմէ ընդհանրական ընթացքի մը, որ ցոյց կու տայ, թէ տարուէ տարի նախկին մրցանիշները կանոնաւոր կերպով «կը տապալին»:

Անցնող 12 տարիներէն 9ի ընթացքին, աշխարհի տարածքին միջին ջերմաստիճանները աւելի բարձր եղած են քան որեւէ ժամանակ՝ 19րդ դարէն ի վեր երբ արձանագրութիւններ պահուել սկսած են:

Մինչեւ Օգոստոս, Եւրոպայի մէջ քանի մը ամիս ջերմաստիճանները միջին հաշուով 5 սառեւան աւելի բարձր արձանագրած են:

Միջերկրականեան շրջաններուն մէջ ծովուն ջերմաստիճանները 2էն 3 սառեւան աւելի բարձր եղած են եւ առաւելագոյն ջերմութիւն արձանագրած են սովորականէն ամիս մը առաջ:

Բրիտանիոյ մէջ, Օգոստոսի առաջին շաբաթը ջերմաստիճանները միջինէն շուրջ 10 սառեւան աւելի արձանագրած են:

ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՇԱՏ ԱՆԵՒԻ ԾԱՅՐԱՅՆՂ ԴԵՊԵՏԵՐՈՒ ՆԱԽԱՏԵՍՈՒԹԻՒՆ

2001ին ՄԱԿԻ Միջկառավարական Յանձնախումբը նախատեսած էր, թէ մինչեւ 2100 թուական մակերեսային ընդհանրական միջին ջերմաստիճանները 1,4 սառեւան սելսիուս աճ պիտի արձանագրեն բաղադրած 1990ին:

Շարք՝ էջ 8

Մասնագէտները չեն կրցած բաւարար տեղեկութիւններ գտնել՝ եզրակացնելու համար հարաւային կիսագունդի անցեալի կլիմային մասին «տուեալներ», սակայն անոնք կ'ըսեն, թէ ինչ կը վերաբերի այն եզրակացութեան, թէ ներկայիս հիւսիսային կիսագունդը կ'արձանագրէ անցնող 2000 տարուան ամէնէն տաք ժամանակաշրջանը, կասկածելի չէ:

Մինչ երկրագունդին կարգ մը մասերը կրնան աւելի ջերմ եղած ըլլալ՝ բաղադրած այսօրուան, միջին ջերմաստիճանները աւելի գով եղած են, կ'ըսեն մասնագէտները:

Ըստ ձոնգի եւ Մանի, երկրագունդը անցնող շուրջ 20 տարիներուն առնուազն 0,2 սառեւան սելսիուս աւելի ջերմացում արձանագրած է, ինչ որ կը համապատասխանէ անցնող դարուն անոր արձանագրած ջերմութեան նուազումին կամ աճին:

ՀԻՄՆԱԿԱՆ ԲԵՒԵՆԻ ՍԱՌՈՅՆԸ 100 ՏԱՐԻՆ ԱՄԲՈՂՁՈՎԻՆ ՊԵՏԻ ՀԱՒ

Միւս կողմէ, Օգոստոսի կէսերուն հրապարակուած միջազգային ուսումնասիրութիւն մը կը գզուշացնէ, թէ հիւսիսային բեւեռը ծածկող սառույցը ամբողջովին պիտի հալի յառաջիկայ դարուն, եթէ բնական կազի արտանետումները շարունակեն ներկայ համեմատութիւններով ջերմացնել երկրագունդին մթնոլորտը:

Ուսումնասիրութեան աշխատակիցներէն Նորվեգիոյ Նանսէն հետազոտութեանց հիմնարկին փրոֆեսէօրներէն Օլա Եոհանսենը համաձայն, 1978էն ի վեր հիւսիսային բեւեռը ծածկող սառույցը իւրաքանչիւր տասնամեակ մօտաւորա-

ՂԱՉԱԽՍՏԱՆԻ ՍԱՌՅԱԿՈՅՆԵՐ ԱՐԱԳՕՐԵՆ ԿԸ ՀԱՒԻՆ

Բրիտանացի հետազոտողներ կ'ըսեն, թէ Ղազախստանի կարգ մը շրջաններու մէջ սառցակոյտերը այնքան արագօրէն կը հալին, որ միլիոնաւոր մարդոց ապրուստի միջոցները կրնան չբանալ:

Օքսֆորտ համալսարանին դասախօսներէն տոքթ. Միլթըն Հէրիսընի գլխաւորութեամբ գիտնականները գտած են, թէ շրջանին սառցակոյտերը 20րդ դարու վերջերս տարեկան շուրջ 2 խորանարդ քմ. սառույց կը կորսնցնէին:

Հետազոտողները կ'ըսեն, թէ կլիմայական փոփոխութիւնը պատասխանատու է շրջանային ջերմաստիճաններու բարձրացումին:

Անոնք կեդրոնացած են հիւսիսային թիէն Շան լեռներու Չայիլիսքի Ալաթաու լեռնաշղթային վրայ: Թիէն Շան լեռները կ'երկարին Ղազախստանի իւրաքանչիւր սառցակոյտի մէջ կը կազմեն սիպերիական եւ կեդրոնական ասիական օդային ծաւալներու միջին:

Շարք՝ էջ 8

Պատրաստեց՝ Ս. Ա. ՊՈՅԱՃԵԱՆ (Աղբիւրներ՝ «ՈՈՅՈՐԸ», «ՊԻ. ՊԻ. ՍԻ.», «ԱՖՓ» եւ «ՆԻՈՒ ՍԱՅՆԹԻՍԹ»)

ԵՐԵՎԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ ԱՆՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ...

Շարունակում 7րդ էջին

Փաշառուրի համաձայն, այդ անը նախատեսվել են ներքին նուազագույնն էլ եւ «ինքնին, խորքին մէջ շատ մեծ աճ է: Կարելի էր այն էլ, թէ անիկա ընդհանրական միջին ջերմաստիճաններու աճ է»:

Ասիկա կը նշանակէ, թէ աշխարհի կարգ մը շրջաններուն մէջ կը կրնայ 3 կամ 4 աստիճան ըլլալ, այլ վայրերը՝ նուազ, ըսած է ան, աւելցնելով, որ նախատեսութեանց համաձայն, ամէնէն աւելի պիտի ազդուին հիւսիսային կիսագունդի, արեւադարձային գոտիներու եւ անոնց հարաւային բաժիններու շրջաններ:

Հետեւաբար պէտք է նկատի ունենալ լայնածիր անդրադարձներ, ինչ կը վերաբերի ջերմաստիճաններու փոփոխութեան: Կը նախատեսուին ջերմաստիճաններու կապուած ողի ծայրայեղ դէպքերու համեմատութեանց աճ, ինչ որ կը նշանակէ, թէ ողողումներն ու երաշտը շատ աւելի ծանրակշիռ պիտի ըլլան քան անցեալին, յայտնած է ՄԱԿի մասնագէտը:

Անոր կը ձայնակցի Բրիտանիոյ Իսթ Անկլիա համալսարանին դասախօսներէն տոքթ. Ճոն Թոմսֆինի, որ կլիմայական յաւելեալ փոփոխութիւններ կը նախատեսէ:

«Շատ ուժեղ փաստեր կան, թէ կլիման փոփոխութեանց կ'ենթարկուի եւ թէ ապագային շատ աւելի յաճախակի տեղի պիտի դիմագրաւենք Օգոստոսի տաքի ալիքին արձանագրած ջերմաստիճանները», ըսած է ան:

Կլիմայական փոփոխութեանց գծով թերահաւատները կ'ըսեն, թէ երկրագունդին կլիման միշտ ալ ժամանակի ընթացքին փոփոխութեանց ենթարկուած է: Անոնք դիտել կու տան, որ բնական երեւոյթներ, ինչպէս արեգակնային գործունէութիւնը կրնան անցնող տասնամեակներուն արձանագրուած փոփոխութեանց պատասխանատու ըլլալ:

Այսուհանդերձ գիտական աշխարհին մէջ կայ ջախջախիչ մեծամասնութեամբ համախոհութիւն մը, թէ ընդհանրական ջերմաստիճանի մեծագոյն պատճառը անուշիկ եւ քարիւղի նման բրածոյ վառելանիւթերու ալրումն է: Ասիկա ջերմութիւն բանտարկող կազերը կ'աւելցնէ մթնոլորտին մէջ:

Այս արտանետումները սահմանափակելու համար ի գործ դրուող միջազգային ճիգերուն գործադրութիւնը չափազանց դժուար է:

ԵՐԿՐԱԳՈՒՆԴԸ 2000 ՏԱՐՈՒԲՆ...

Շարունակում 7րդ էջին

Շրջանին մէջ կան 416 սառցակոյտեր, որոնք 510 քառակուսի քմ. տարածութիւն մը կը ծածկեն:

Ըստ Հէրիսընի եւ Բրիտանիոյ Նիուքսըլ համալսարանին, Գերմանիոյ Ֆոն Համպոլթ համալսարանին եւ Ղազախստանի գիտութեանց Ակադեմիայի պաշտօնակիցներ կ'ըսեն, թէ անոնք 1955էն 2000ի միջեւ տարեկան շուրջ 2 խորանարդ քմ. սառոյց կորսնցուցած են:

Երկրին մեծագոյն քաղաքին՝ Ալմաթիէն 30 քմ. հարաւ գտնուող Թոնուլ-քու սառցակոյտը հսկողութեան տակ եղած է ղազախ գիտնականներու կողմէ 1902էն ի վեր: 1923էն ի վեր անիկա մասաւորապէս մէկ քմ. ետ քաշուած է, շուրջ 51 միլիոն խորանարդ մեթր սառոյց կորսնցնելով:

Խմբակը կ'ըսէ, թէ այս փոփոխութիւնները ծանրակշիռ հետեւանքներ ունին գետերու ջուրերուն վրայ, հետեւաբար նաեւ Ալմաթիի ջուրի հայթայթումներուն:

Ոռոգումներու համար օգտագործուող գետերէն շատեր իրեն ջուրը թիչն Շանի սառցակոյտերէն կը ստանան, հետեւաբար միլիոնաւոր մարդոց ապրուստի միջոցները պիտի ազդուին:

Գիտնականներուն համաձայն, ո'չ միայն երկրին երկրագործութիւնն ու բարգաւաճումը պիտի վտանգուին, այլ նաեւ Կերդնական Ասիոյ լայնածիր մէկ բաժինին քաղաքական կայունութիւնը, նկատի ունենալով, որ բազմաթիւ գետեր եւ սառցակոյտեր պետական սահմաններէ կ'անցնին:

Հէրիսընի համաձայն, Թիչն Շանի սառցակոյտերը կը հալին կլիմայական փոփոխութեան պատճառով:

ՕՐԱՏԵՏՐ

ՓՈՒՍՏՈՆ / ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ / ԶՐՕՍԱՇՐՉՈՒԹԻՒՆ

ՆԱԶԻՐ ԻՍՄԱՅԻԼԻ ՆՈՐ ԳԵՂԱՆԿԱՐՆԵՐԸ «ԱժԻԱԼ»Ի ՍԵՉ




Իր ինքնատիպ գեղանկարներով ծանօթ սուրիացի գեղանկարիչ Նապիր Իսմայիլի իր գեղանկարներու նոր հաւաքածոն լիբանանցի հանրութեան կը ներկայացնէ «Աժիալ» արուեստի ցուցասրահին մէջ: Մինչեւ 21 Սեպտեմբեր երկարող այս ցուցահանդէսը կը ներկայացնէ քառասուն մեծադիր թէ փոքր չափերով գեղանկարներ, որոնք իրագործուած են արւեստագէտին բնորոշ թեքնիքներով:

1970ական թուականներէն ի վեր անհատական թէ հաւաքական քաղաքացիական ցուցահանդէսներով հանրութեան ներկայացուած Նապիր Իսմայիլի գործերը ցուցադրուած է արաբական երկրներու, ինչպէս նաեւ՝ եւրոպական մայրաքաղաքներու մէջ: Արաբական թէ միջազգային մրցումներու մասնակցած արուեստագէտը առաջին մրցանակակիրն է 1981ի Պերլինի «Սալոն ինթերկաֆի»-ի: Թոքեաններու դիմագործներ յիշեցնող կերպարներով հարուստ Նապիր Իսմայիլի գեղանկարները մեծ մասը նուիրուած են մարդ նուիրուած, միջազգային եւ ընկերու-

Նապիր Իսմայիլի գործերն օրինակ մը թեան հետ անոր յարաբերութիւններուն: Ուղղաձիգ կեցուածք ունեցող անոր դէմքերը կ'արտայայտեն զգացումներու հարստութիւն մը, որ աւելի եւս խորհրդանշող կը դարձնէ պատկերը: Հետաքրքրական է նաեւ այն, որ Նապիր Իսմայիլի ինք կը պատրաստէ իր գեղանկարներուն թուղթերը: Այս իրագործելու համար, ան կ'օգտագործէ ծրարելու թուղթեր, խաւաքարտներու տեսակներ, ծալուող թուղթեր, որոնց յատուկ որակ կու տայ՝ անոնց վրայ աւելցնելով զանազան նիւթեր, ինչպէս՝ հաւիկի մասեր եւ այլն: Նապիր Իսմայիլի գեղանկարներուն ցուցահանդէսը կարելի է այցելել Երկուշաբթիէն Ուրբաթ օրերը՝ առաւօտեան ժամը 10:00էն մինչեւ երեկոյեան ժամը 6:00:

ՕՐԵՆԵՒՅԹ



ԵՐԵՎԱՆԻ, 9 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2003
ՊԵՅՐՈՒԹ ԱՐԵՒՈՏ
ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆ ԶԵՐԵԿ՝ 29°C
ԳԻՇԵՐ՝ 24°C
ԽՈՆԱՌՈՒԹԻՒՆ՝ 61%

DAY WATER
RECOMMENDED FOR BABIES
Free Delivery 19 Litre 2000L.
DAY WATER, Tel: 03/435298

☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

ԽՈՅ (21 Մարտին 20 Ապրիլ)
Բազմատեսակ հարցումներ կ'ուղղէք դուք ձեզի, որոնց պատասխանը տալու համար հարկ է մտածէք հանդարտօրէն: Կարիք չկայ մտահոգուելու, որովհետեւ երբեմն կը մտածէք զուր տեղը, երբ յատուկ պատճառ մը չկայ:

ՅՈՒԼ (21 Ապրիլէն 21 Մայիս)
Ձեր խառնուածքը ընկերասեր է, ու այսօր պիտի մտածէք օգուտբեան ձեռք երկարել դժուարութեան մտնելու անձի մը: Օրը կը թելադրէ ըլլալ խոհեմ, սիրալիր: ԵՐԿՐՈՒՄԵՆԻ (22 Մայիսէն 23 Յունիս)

Առաջին հրաւերին մի՛ ցատկէք դէպի անծանօթ գործ մը կատարելու: Պէտք է քիչ մը քննարկէք գործին բոլոր կողմերը եւ ապա տաք ձեր որոշումը: ԽԵՑԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս)

Եթէ որոշած էք Սեպտեմբեր ամսուան ընթացքին արձակուրդի երթալ, շատ լաւ պիտի զգաք, որովհետեւ նոր առիթներ պիտի ստեղծուին ձեր դիմաց: Օրը շահաբեր է: ԱՌԻԻԾ (24 Յուլիսէն 23 Օգոստոս)

Ոչ մէկ համաձայնագիր ստորագրեցէք առանց գայն կրկին ու կրկին կարդալու: Մի՛ վարանիք այդ առջնութեամբ բարեկամներու խորհուրդը առնելու: Օրը շահաբեր է: ԿՈՅՄ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)

Նկատի առէք ձեր կողակիցին կամ ընկերոջ գիտողութիւնները, որոնք արդար են: Անդրադարձք ձեր սխալին եւ ինքնաքննադատութեամբ կատարեցէք ձեզի ուղղուած նկատողութիւնները: ԿՇԻՌՔ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)

Հարցերը քննեցէք արդարամտութեամբ: Ձեր ընկերները կը կարծեն, որ դուք ամէն հարց կը դասաւորէք: Երազկոտ մի՛ ըլլաք, որպէսզի լուծուելիք հարցերը ողբերգութեան չվերածուին: ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)

Եթէ ուզէք, այսօրուան հանդիպումը կրնայ յանգիլ լաւ բարեկամութեան մը: Ձեր խօսակցիներուն հետ եղբ անկեղծ են բարեխիղճ, որպէսզի յաջողիք: ԱՂԵՂՆԱՒՈՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)

Կը կարծէք թէ արգելափակուած էք ձեր տան մէջ: Ասիկա ճիշդ չէ: Փոխեցէք ձեր տեսակետը եւ լծուեցէք եռանդուն աշխատանքի: Յոյսը կորով կու տայ: ԱՅԾԵՂՋԻԻՐ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)

Յառաջիկայ դպրոցական վերամուտը պիտի սկսիք եռանդով, քոլեճական ըլլաք թէ համալսարանական: Միայն թէ ձեր այս տրամադրութիւնը ըլլայ տեսական: ԾՈՎԱՆՈՅՇ (21 Յունուարէն 19 Փետրուար)

Այսօր պիտի ունենայ դրամական վնասներու կարտաւորութիւններ: Պիտի ստորագրէք դրամատուժ սեղ (չէք), եւ պիտի ստանաք նոյն ատեն այլ կարգի հատուցման գումարներ: ՉՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ)

Երջանկաբեր է օրը, ամէն կողմէ պիտի լսէք շնորհաւորութիւններ եւ հանելի զովեստներ: ՄՃացէք ձեր զիրքին բարձրութեան վրայ, փոխադարձ յարգանքով:

«ԱԶԳԱԿ»Ի ՍԵՉ ԸՆԴՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ
Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ»ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման թուականէն առնուազն օր մը առաջ, Մինչեւ ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԱՐ 5:00:
ՄԱՀԱԶԳՆԵՐԸ բացատրութիւն են: Մահագր կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ գպլն հրատարակելու հնարաւորութիւն կ'այ:

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5535

Պատրաստեց՝ Տ.Մ. ԱՆԱԶԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10
1									
2									
3									
4									
5									
6									
7									
8									
9									
10									

- | ՇՈՐՈՂՈՒՄԱԿԱՆ | ՈՒՂՈՒՄԱԿԱՆ |
|---|---|
| 1. Տիպար - Համբոյր: | 1. Շէջքափորի երկերէն |
| 2. Պակասաւոր - Յետ-միջօրէ: | - Դաշտ: |
| 3. Անձնակերպութիւն: | 2. Զօրաբարէլի որդին - Ծովային: |
| 4. Չայնանիշ - Լիպիոյ վերջին թագաւորը: | 3. Շին Ֆէյնի զինուորական թեւը - Հանդերձի ներքին կտաւ: |
| 5. Կրկնուած ձայնաւորներ - Անակաւոր մասնիկ - Ռամկորէն՝ այո՛: | 4. 325 թ. տիեզերական ժողովին վայրը - 100 մ²: |
| 6. Ծանրութեան միասնոր - Անգուլթ: | 5. Կրկին - Արցախի հնապարհներէն: |
| 7. Կարող - Յուցական անակաւոր: | 6. Մէջտեղ - Որթատուակի կտրուած ճիւղ: |
| 8. 451 թ. ճակատամարտին տեղանունը - Իւրացո՛ր: | 7. Փոխարինութիւն: |
| 9. Արու ուղտ - Ճափոնական դասական թատրոն - Այրուրեանէն: | 8. Նոյնանուն պապեր - Փոքրացնող մասնիկ: |
| 10. Տառի մը դրացիները - Պահլէ օր: | 9. Եւրոպացի իշխանուհի - Զօրաւոր բամբուլ: |
| | 10. Չայնակից գիրքեր - Մարտնչիլ: |

ԹԻՒ 5534
ԽԱՉԲԱՌԻՆ
ԼՈՒԾՈՒՄԸ

ԱԶԳԱԿ 50 ՏԱՐԻ ԱՄՈՒՄԸ
9 Սեպտեմբեր 1953


ԱՄՈՒՄԱՆԱԼՈՒ ՆՈՐ ՄԻՋՈՑ ՄԸ

40 տարի առաջ, այսօր, երուանդ Օտեան Պոլսոյ «ժամանակ» թերթին մէջ գրած էր հետեւեալ սրամիտ քրոնիկը: - Կ'երեւայ որ ընդհանուր պատերազմին հետեւանքով ստեղծուած նոր կացութիւնը միջոց մը եղած է մեր շատ մը աղջիկներուն համար ամուսիններ գտնելու: Ասիկա թերեւս տարօրինակ թուի, եթէ պէտք եղած լուսաբանութիւնը չտամ: Արդ, ահաւասիկ խնդիրը: - Ենթադրեցք թէ աղջիկ մը կայ որ համեստ օժիտ մը ունի, 50-60 ոսկի եւ կ'ուզէ շնորհքով երիտասարդի մը հետ ամուսնանալ: - Ընդհանուր պատերազմէն առաջ այդ տեսակ համեստ օժիտով մը շատ դժուար պիտի գտներ իր փնտռածը: Բայց անհարկ մը Սարայիվոյի մէջ Աւստրիոյ գահաժառանգը սպաննեց եւ ամէն բան դիւրացաւ: Արդարեւ, այդ ոճրագործութեան ծագում առաւ ընդհանուր պատերազմը որուն հետեւանքը եղաւ չէ-գոք երկիրներու ալ օրաշարժը: Եւ ահա տեղերուն մէջ սա տեսակ խօսակցութիւններ տեղի կ'ունենան:

ԱՅՍՕՐ 9 ՍԵՊՏԵՄԲԵՐԻՆ

- 1922.- Բեմալական ուժեր կը գրաւեն Իզմիրը եւ իրոյ ձարակ ԿՐ դարձնեն քաղաքը, անխնայ ջարդելով յոյն եւ հայ բնակչութիւնը:
- 1982.- Շ.Յ.Ա. Մարտիկները կ'ահաբեկեն Պուլկարիոյ Պուրկաս քաղաքի թրքական հիւպատոսարանին վարչական կցորդը:

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն



ԱՇԽԱՐՀ



ՃԱՏՐԱԿ

— ԼԻՔԱՆԱՆԻ ՏՂՈՑ

ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ՄԵՋ ՓԱՅԼԵՑԱԲ...

ՔՆԱՐԻԿ ՍՈՒՐԱՏԵԱՆ

— ԼԻՔԱՆԱՆ ՊԻՏԻ ԶԻՒՐԸՆԿԱԼԵ

ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆԸ

Ճատրակի լիքանանի տղոց ախոյեանությունը վերջ գտավ Ֆայսալ Նեյրավալի յաղթանակով: Խեյրավալ տիտղոսի արժանացավ ախոյեանությունը և 2 հանգրուանին մինչ այդ ոչ մեկ պարտություն կրած Քնարիկ Սուրատեանին յաղթելով: Իբրև արդիւնք, Քնարիկ Սուրատեան հանդիսացավ չորրորդ: Լիքանանան էլ արաբական մամուլը գովասանքով արտայայտեցավ Հ. Մ. Ը. Մ. ակն բրոջ այս նուաճումին մասին, որովհետև աշխարհի մէջ հապուղէպէս երեւոյթ է, որ իգական սեռի ներկայացուցիչներ հաւասարե-հաւասար մրցին տղոց հետ:



Քնարիկ Սուրատեան ախոյեանություն 9 մրցումներէն 5ը աւարտեց յաղթանակով, արժանագրեց 3 հաւասարություն և միայն 1 պարտություն: Այսպիսով ան միջազգային դասաւորման 15 կէտ շահեցավ և հանդիսացավ ախոյեանություն ընթացքին միջազգային դասաւորման ամէնէն աւելի կէտեր ապահովող վարպետը:

ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆԵԱՆ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

Անպտեմբեր 25էն Հոկտեմբեր 6 Լիքանան պիտի հիւրընկալէ միջերկրականէան երկիրներու ճատրակի տղոց և աղջկանց ախոյեանությունը: Տարածաշրջանի կախեւորագոյն մրցաշարքերէն մէկը հանդիսացող այս ախոյեանություն իրենց մասնակցութիւնը պիտի բերեն Հ. Մ. Ը. Մ. ական քոյրեր՝ Քնարիկ և Սիւլան Սուրատեան:

Ախոյեանություն մասնակիցներու կարգին են Ֆրանսայի, Սպանիոյ, Իտալիոյ, Յունաստանի, Մալթայի, Սուրիոյ, Թուրքիոյ, Մարոքի, Ալձերիոյ և Լիպիոյ ներկայացուցիչները:

ԹԵՆԻՍ. ԵՈՒ. ԷՍ. ՕՓԸՆ

ՌՈՏԻՔ ԱՐԺԱՆԱՅԱԻ ՏԻՏՂՈՍԻՆ

ԵՈՒ. ԷՍ. ՕՓԸՆԻ տղոց աւարտականին, ամերիկացի էնտր Ռոտիք 6 - 3, 7 - 6 եւ 6 - 3 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք սպանացի Խուան Քարլոս Ֆերեռոն (Յորդ) տիրացաւ տիտղոսին: 21 տարեկան ամերիկացին, որ իր 23 էջերով բաւական նեղ կացութեան մատնեց Ֆերեռոն, այսպիսով առաջին անգամ ըլլալով կրան շէմի տիտղոսի մը կը տիրանար, այդ ալ՝ իր երկրին մէջ:

Ամերիկացին, որ բաժակին տիրանալէ բացի շահեցաւ նաեւ մէկ միլիոն ամերիկեան տոյարի գումար մը, այսպիսով արդեւ շահողի սպանացու, որ 23 տարեկան Ֆերեռո, Մանուէլ Օրանժէսէն ետք (1975) դառնայ առաջին սպանացին, որ տիրանայ այս կրան շէմին:

Ստորեւ տղոց, աղջկանց եւ խառն գոյգի տիտղոսին տիրացող մարզիկները:

ՏՂՈՑ ՉՈՅՉ

ԵՈՒԱՍ Պիտրքման (Շուէտ) / Թոտ Վուտպրիճ (Աւստրալիա, 4րդ) - Պոպ Պրայլըն (Մ. Ն.) / Մայք Պրայլըն (Մ. Ն., 2րդ) 5 - 7, 6 - 0 եւ 7 - 5

ԱՉԳԱԿՆՑ ՉՈՅՉ

Վիրժինիա Ռուանո - Փաքալ (Սպանիա) / Փաուլա Սուարես (Արժանթին, 2րդ) - Սվեթլանա Քուլիչեցովա (Ռուսիա) / Մարթինա Նարաթիլովա (Մ. Ն., 4րդ) 6 - 2 եւ 6 - 3

ԽԱՆՈՒ ՉՈՅՉ

Քաթարինա Սրեպոնիք (Սլովաքիա) / Պոպ Պրայլըն (Մ. Ն., 8րդ) - Լինա Քրանորոյթցքայա (Ռուսիա) / Տանիէլ Նեսթոր (Քանադա, 5րդ) 5 - 7, 7 - 5 եւ 7 - 6

● ԹԵՆԻՍԻ միջազգային ֆետերասիոնը երէկ հրապարակեց տղոց և աղջկանց աշխարհի նոր դասաւորումը, ուր առաջին տասը դիրքերը կը գրաւեն հետեւեալ մարզիկները:

ՏՂԱՔ	ՎԷՏ
1.- Խուան Քարլոս Ֆերեռո (Սպանիա)	4250
2.- Էնտր Ռոտիք (Մ. Ն.)	4165
3.- Ռոմէ Ֆետերեր (Չուիլցերիա)	3825
4.- Անտրէ Ակասի (Մ. Ն.)	3670
5.- Կիլիերմո Քորիա (Արժանթին)	3105
6.- Քարլոս Մոյա (Սպանիա)	2685
7.- Լէյթըն Հուիթ (Աւստրալիա)	2525
8.- Ռայնըր Շուրլըր (Գերմանիա)	2415
9.- Գաիթ Նալպանտեան (Արժանթին)	2145
10.- Սեպաթիան Կրոման (Ֆրանսա)	1850
ԱՉԳԱԿՆԵՐ	
1.- Քիմ Քլիսթորպ (Պելճիքա)	6589
2.- ժուսթին Հենէն - Հարտն (Պելճիքա)	6259
3.- Սերէնա Ռիլիքմ (Մ. Ն.)	4955
4.- Լինասէլ Տէլլընփորթ (Մ. Ն.)	3577
5.- Ճենիֆեր Քալիքիաթի (Մ. Ն.)	2809
6.- Վիլլըմ Ռիլիքմ (Մ. Ն.)	2508
7.- Էմիլի Մորեանո (Ֆրանսա)	2341
8.- Անասթասիա Միսքինա (Ռուսիա)	1996
9.- Էլենա Տեմենիշիւ (Ռուսիա)	1881
10.- Չանտա Ռուպին (Մ. Ն.)	1866

ՊԻՏԻ ՓՈՐՁԵՆՔ ՏԵՒԱԲԱՐ ՄՆԱԼ Ա. ԴԱՍԱԿԱՐԳԻ ԴԱՍԱԿՈՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՎԵՅԵԱԿԻՆ ՄԵՋ

Կ'ԸՍԵ Հ. Մ. Ը. Մ. Ի ՖՈՒԹՊՈՒԼԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԽՈՒՄԲԻՆ ՄԱՐԶԻՉԸ՝ ՎԱՉԵ ՍԱՐԳԻՍԵԱՆ

«ԱՉԳԱԿ».- Տպաւորիչ եղանակէ մը է տըք, ուր Հ. Մ. Ը. Մ. Ի ֆուտպոլի կազմը կրեց միայն մէկ պարտություն (Նըմմէի դէմ), աւելի քան ամիս մը տղաքը արձակուրդի մէջ էին: Ի՞նչ նախապատրաստական աշխատանքներու ձեռնարկեցիք այս ընթացքին:

ՎԱՉԵ ՍԱՐԳԻՍԵԱՆ.- Ֆուտպոլի մէջ ընդունուած կարգ է, որ ախոյեանութեան աւարտին խումբերը ամիս մը արձակուրդ կ'առնեն: Հ. Մ. Ը. Մ. Ի պարագային այս արձակուրդը քիչ մը աւելի երկարեցաւ վարչական փոփոխութիւններու և կազմակերպչական աշխատանքներու պատճառով: Կարելի է ըսել, որ իբրև առաջին դասակարգի ախոյեանութեան պատրաստուող խումբ մենք ուշացած ենք: Անցեալ տարի ախոյեանութեան սկիզբէն 3 ամիս առաջ պատրաստեցինք խումբը, եղանակին հետք մէջ ենք, ինչպէս ըսի, ժամանակի նեղ ըլլալուն պատճառով:

«Ա».- Անցեալ եղանակին յստակ նպատակ դրուած էր՝ բարձրանալ Ա. դասակարգ, առանց պարտություն կրելու: Ի՞նչ է Հ. Մ. Ը. Մ. Ի վարչականներուն, մարզիչին և մարզիկներուն նպատակը այս տարեշրջանին:

Վ. Ս.- Մենք կ'ուզենք Հ. Մ. Ը. Մ. Ի վերադարձնել իր փառքի օրերուն: Պիտի փորձենք տեսարար մնալ դասաւորման առաջին վեցեակին մէջ, և ոչ՝ կաղալ և պայքարիլ Բ. դասակարգ փոխադրուելու վտանգին մէջ գտնուող այլ խումբերու հետ: Այս նպատակը իրագործելու համար որդեգրած ենք հետեւեալ մարտավարութիւնը. խումբը օժտել գլխաւորաբար երիտասարդ մարզիկներով, որոնք յառաջիկայ եղանակներուն պիտի շարունակեն իրենց վերելքը: Այս իմաստով, մեր նպատակը ժամանակաւորապէս մարզիկներու տագնապը լուծել է: Կազմը պիտի ունենայ 6-8 երիտասարդ մարզիկներ, որոնք թէև նուազ փորձառու են, սակայն անոնք փորձառութիւն ձեռք ձգելով հիմը պիտի դնեն երկար շունչ ունեցող խումբի մը: Չենք ուզեր ամէն տարի մարզիկներու փնտրուող կատարել: Միւս կողմէ, խումբին մէջ փորձառու մարզիկներու ներկայութիւնը պիտի նպաստէ երիտասարդ մարզիկներուն փորձառութիւն ձեռք ձգելուն:

«Ա».- Իսկ օտար մարզիկներ հրաւիրելու իմաստով ի՞նչ նախաքայլեր առնուած են:

Վ. Ս.- Համահայկական խաղերուն համար Հայաստան գտնուած ընթացքիս հանդիպեցալ շարք մը ֆուտպոլիստներու, որոնցմէ ոմանք յառաջիկայ օրերուն պիտի այցելեն Լիքանան: Անոնցմէ պիտի ընտրենք 2 ֆուտպոլիստներ: Կազմը գլխաւորաբար կարիքը ունի լիպերոյի և կոլտրորի: Մենք հրաւիրած ենք ֆուտպոլիստներ, որոնք կը խաղան այս դիրքերուն վրայ:

Ունինք նաեւ նիկերիացի երկու ֆուտպոլիստներ, որոնք նոյնպէս փորձ-խաղերու պիտի հետեւին կազմին հետ:

Նշենք, որ իբրանացի ֆուտպոլիստներ նոյնպէս հետաքրքրուած են Հ. Մ. Ը. Մ. Ի մէջ թիւով դիմումագրիւններ կը ստանանք: Անոնցմէ նոյնպէս կարելի է խոստանալից տարրեր ընտրել:

Յառաջիկայ շաբաթներուն տեղի պիտի ունենան շարք մը փորձ-մրցումներ, որոնց ընթացքին պիտի տեսնենք, թէ իբրանացի և օտար ֆուտպոլիստներէն որո՞նք արժանի են խումբին մէջ ընդգրկուելու:

«Ա».- Հ. Մ. Ը. Մ. Ի անցեալ եղանակին տպաւորեց թէ՛ Բ. դասակարգի ախոյեանութեան, թէ՛ բաժակի մրցաշարքին ընթացքին: Սակայն ամբողջ եղանակ մը Ա. դասակարգի խումբերու հետ մրցիլը կը պահանջէ յարատեւում և լուրջ ծրագրաւորում: Այս իմաստով ի՞նչ աշխատանքներ կը կատարուին:

Վ. Ս.- Արպեսպի ֆուտպոլիստներ ունենան կայուն և լաւ խաղարկութիւն, անոնք նիւթապէս և բարոյապէս հանգիստ պէտք է ըլլան:

Նոյնիսկ Նըմմէի և Օլիմպիքի նման հսկայ խումբեր յաճախ խաղամակարդակի վերելիչարումներ կ'ունենան, որովհետև իրենց նիւթական հարցերը միայն ժամանակաւորապէս լուծած են, և պարբերաբար դժուարութիւններու դէմ-յանդիման կը գտնուին: Այս դժուարութիւնները բնականաբար անկախ կ'անցնին համակիրին ուշադրութենէն, և համակիրը կ'ակնկալէ, որ իր խումբը տեսարար միեւնոյն մակարդակի խաղարկութիւն կիրարկէ:

Մենք որդեգրած ենք միջոցներ, որ մեր ֆուտպոլիստները ունենան կայուն աշխատանքներ և վերջ ըլլան նման մտահոգութիւններէ: Մեր ֆուտպոլիստները այս իմաստով դժուարութիւններ կը դիմապահեն, որովհետև գործատները համաձայն չեն գտնուիր, որ իրենց պաշտօնեան կէտ օր աշխատի և ապա՝ ֆուտպոլի փորձերու համար լքէ գործատուը: Եթէ յաջողիք այս հարցերը հիմնովին լուծել, կը կարծենք, թէ այս երիտասարդ խումբով կրնաք լաւ արդիւնքներ արձանագրել:

Նման դժուարութիւններ հարթելու պարագային, մենք պիտի ըլլանք Ա. դասակարգի լաւ խումբերէն մէկը, որուն մասին պիտի խօսին բոլորը: Բնականաբար, մեր համակիրները պէտք չէ ակնկալեն, որ մենք Օլիմպիքի նման Ա. դասակարգ բարձրանալին անմիջապէս ետք տիրանանք բաժակին և ախոյեանութեան, սակայն պիտի ընենք մեր կարելին՝ մնալու համար առաջին վեցեակին մէջ:

«Ա».- Խօսեցանք համակիրներու ակնկալիքներուն մասին: Իսկ ինչ են ձեր ակնկալիքները համակիրներէն:

Վ. Ս.- Մենք Ռէյա Մատրիտ չենք: Մեր համակիրներէն շատեր եւրոպական ֆուտպոլի կը հետեւին և անոնք կը հաւնին կամ չեն հաւնիր Ռուսիայի և Ռիվայտոյի նման ֆուտպոլիստներ: Նման ֆուտպոլիստներ իր խաղարկութիւնը դիտելէ ետք համակիրները յաճախ մարզիկները կը բողոքատեն անոնց հետ, ինչ որ անտրամաբանական է և սխալ: Եկէք առիթ տանք մեր մարզիկներուն, չբողոքատենք Եւրոպան և Հ. Մ. Ը. Մ. Ի: Այո՛, կը փափաքինք թերեւս եւրոպական մակարդակի խումբ մը ունենալ, սակայն, կը կրկնեմ, առիթ տանք մեր ոչ-արհեստավար ֆուտպոլիստներուն, որպէսզի անոնք իրենց կարգին արդարացնեն իրենցմէ սպասուածը:

Մենք կը խնդրենք մեր համակիրներէն, անցեալ տարուան նման, խոունեքան ուղղորդիլ դաշտ և քաջակերել խումբը: Իսկ եթէ պատահի, որ խումբը հաւասարութիւն արձանագրէ կամ պարտուի, թող համակիրները չըսեն՝ «ա՛յս է եղեր խումբը», այլ որոշ ժամանակ մը տան, որովհետեւ, կը կրկնեմ մենք վստահ ենք, որ այս խումբը լաւ արդիւնքներ պիտի արձանագրէ այս և յառաջիկայ տարիներուն:

ՓՈՆԿ ՓՈՆԿ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՄՐՅՈՒՄՆԵՐԸ ԿԸ ՍԿՍԻՆ ԱՅՍՕՐ

Լիքանանի փինկ փոնկի աղջկանց անհատական ախոյեանութեան մրցումներուն, այսօր՝ Երեքշաբթի, Հ. Մ. Ը. Մ. ական երեք մարզիկներ մրցումներ ունին կատարելիք:

Անհատական տղոց մրցումները կը սկսին վաղը՝ 2րդեքշաբթի, զոյգի տղոց մրցումները՝ 11 Սեպտեմբերին, իսկ խառն զոյգի և աղջկանց զոյգի մրցումները՝ 11 Սեպտեմբերին: Նշենք, թէ վաղուան յայտագիրին վրայ են նաեւ տղոց անհատական կարգ մը մրցումներ:

Ստորեւ՝ այսօրուան մրցումներուն յայտագիրը:

Լարա Զէչէպաշեան - Էլիանա Զաշամի
Դուրի Մուհըղլեան - Թալա Հաուիլա
Նուլ Զէշիշեան - Ժոզէթ Զըղէյա

ՄՈՆՏԻՄԻ ԶՏՈՒՄԻ ՄՐՅԱՇԱՐՔ

ԱՐԺԱՆԹԻՆ ՀԱՒԱՍԱՐՈՒԹԻՒՆ ԱՐՁԱՆԱԳՐԵՑ

Հարաւային Ամերիկայի գօտիէն ներս, անցեալ շաբաթավերջին տեղի ունեցան 2006ի Մոնտիմի պտումի հինգ ճակատումներ, որոնց ընթացքին արձանագրուեցան չորս յաղթանակ և մէկ հաւասարութիւն:

Ստորեւ՝ մրցումներուն արդիւնքները.

Ուրուկուէյ - Պոլիվիա	5 - 1
Եկուադոր - Պարագի	1 - 2
Արժանթին - Չիլի	2 - 2
Էքուատոր - Վենեսուելա	2 - 0
Փերու - Փարակուէյ	4 - 1

ՀԱՅԱՍՏԱՆ - ՅՈՒՆԱՍՏԱՆ ՄՐՅՈՒՄԻՆ ԱՌԵՂԾՈՒԱԾԸ ՄԵԾ ԱՂՄՈՒԿ ԿԸ ՍՏԵՂԾԵ

Հայաստանի ֆուտպոլի ազգային խումբը երէկ մեկնեցաւ Պելճաք, ուր վաղը Եւրօ - 2004ի պտումի իր նախավերջին մրցումը պիտի կատարէ դաշտին տէրերուն՝ Հիւսիսային Իրլանտայի դէմ: Անոնց միջեւ տեղի ունեցած նախորդ հանդիպումը, որ տեղի ունեցաւ Երեւանի մէջ, վերջ գտաւ Հայաստանի յաղթանակով (1 - 0):

Պելճաք մեկնող պատուիրակութեան մաս չկազմեց Հայաստանի ֆուտպոլի ֆետերասիոնին նախագահ Ռուբէն Հայրապետեան, որ կը փորձէ լուծել Հայաստան - Յունաստան մրցումին կապուած առեղծուածը:

Մամլոյ ստուլիսի մը ընթացքին, Հայրապետեան ըսաւ, որ Յունաստան բնակող Հայաստանի ֆուտպոլի ազգային խումբի նախկին մարզիկ Երուանդ Սուքիասեան հետաձայնային կապի մը ընթացքին Յունաստանի ֆուտպոլի ֆետերասիոնին անունով իրեն առաջարկած է այս մրցումը «ժախել»՝ մէկ միլիոն ամերիկեան տոլարի:

Նկատի ունենալով, որ Հայրապետեան բողոքեց ԵՈՒ. Է. Ֆ. Ա. Ին, նշանակուած յատուկ պատուիրակութեան մը ընկերակցութեամբ ան կը գտնուի Հայաստան՝ հարցը լուծելու համար:

Իր կարգին, Յունաստանի ֆուտպոլի ֆետերասիոնին նախագահը՝ Վասիլիս Կակաթիս բողոքեց ԵՈՒ. Է. Ֆ. Ա. Ին, ըսելով, որ կը մերժէ այս ամբաստանութիւնները:

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ ԳՐԱԻԸ ԿԸ ԴՆԵ ԱՐԱՔԱԿԱՆ ...

Ծարունակուած Ա. ԷջէԳ

քը կանայ առած է երկու տարի և վերսկսած՝ յառաջիկայ տարուան ընթացքին աւարտելու պայմանով:

Նախագահ Լահուտ Հատասի մէջ շինարարական աշխատանքի պատասխանատուներուն բացատրողական լսեց, հարց տալով, թէ ինչո՞ւ այդքան յապաղում արձանագրած է այդ աշխատանքը:

Նախագահ Լահուտ շէշտեց, որ հետաձայնային հաղորդակցութիւններ պիտի ունենան համապատասխան աշխատանքի պատասխանատուներուն հետ, որպէսզի նշեալ աշխատանքը աւարտի յառաջիկայ տարուան ընթացքին, յատկապէս նկատի ունենալով այն իրողութիւնը, որ նշեալ աշխատանքը ներդրումի կարիք ունի և արդէն իսկ Քարգաւաճման Արաբական Մտուկին կողմէ նման օժանդակութիւն մը գոյութիւն ունի՝ պահ դրուած խորհրդարանին մօտ:

Նախագահ Լահուտի հիւրերէն եղաւ նաեւ Քապալան Իսա Խորի: Քննարկուեցան Պապատա-Ալէյ երեսփոխանական մասնակի ընտրութիւններուն առնչուող հարցեր:

Նախագահ Լահուտ յոյս յայտնեց, որ Պապատա - Ալէյ ընտրութիւններուն ընթացքին կը դրսեւորուի ժողովուրդին պատկանած իր քուէով:

ՀԱՏ ԹՈՒՐԹՈՒՅՑ ԿԵՐԱՐԱՍ
ԳԵՐԱԳՈՅՆ ԱՏԵԱՆԻ ՆԱԽԱԳԱԳԻՆ

ԹՈՒՐԹԻԱ ՆՈՐ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԵ ԿԱՐԻՔԸ ՈՒՆԻ

ԱՆԳԱՐԱ, 8 (ԱՅՓ).- Թուրքիա նոր սահմանադրության մը կարիքը ունի՝ բարելավելու համար ժողովրդավարության եւ մարդկային իրաւանց մարդկերը, մինչ անկա կ'առաջադրէ Ե. Միութեան անդամակցիլ, յայտնած է երկրին վերադարձ գերագոյն ատենանի նախագահ Էրասւլան Էօլքալա:

Գաւազանի նոր տարուան բացման առիթով արտասանուած խօսքի մը մէջ դատաւորը շեշտած է, թէ պէտք է ծամանակավրէյ դարձած օրէնքները բարեփոխուին: «Այդ օրէնքներէն առաջնահերթը, որ պէտք է սրբագրել, բարեփոխել կամ նոյնիսկ վերանորոգել՝ սահմանադրութիւնն է», ըսած է ան:

Ներկայ սահմանադրութիւնը, որ ի վօրու է 1982ին ի վեր, մեծ համեմատութեամբ թելադրուած է բանակին կողմէ՝ 1980ի պետական հարւածէն ետք: Անկա քննադատութեանց առարկայ դարձած է թէ՛ երկրին, թէ՛ արտասահմանի մէջ, երկրին մէջ ժողովրդավարութեան բարելաման դէմ գցուող խոչընդոտ մը նկատուելով:

Գլխաւոր քննադատութիւններէն մէկը այն է, թէ սահմանադրութիւնը պետութեան իրաւատրութիւն կու տայ՝ ստիպողական վիճակի դրութեան հաստատման ծամանակամիջոցին անհատական իրաւունքներն ու պատուութիւնները մեծ համեմատութեամբ սահմանափակելու:

Սահմանադրութիւնը քանի մը անգամ բարեփոխուած է, սակայն «փոփոխութիւնները անբարար եղած են», ըստ դատախաչի:

ԲՐԻՏԱՆԻՈՅ ՄԷՋ ՊԻՏԻ ՈԳԵԿՈՉՈՒԻ 11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ «ՀՈՅԱԿԱՊ» ԱՐԱՐՔԻՆ ՅԻՇԱՏԱԿԸ...

ԼՈՆՏՈՆ, 8 (ԱՅՓ).- Բրիտանական իսլամական արմատական «Մուսուլման» խմբակը Երկուշաբթի օր ողջունած է 2001 Սեպտեմբեր 11ին Մ. Նահանգներու մէջ անձնասպանական գործողութիւններ կատարած օդահէնները, զանոնք «հոյակապ 19» որակելով:

Յարձակումներուն երկրորդ տարեդարձին, որ Հինգշաբթի օր կը կատարուի, խմբակը Լոնտոնի մէջ պիտի կայացնէ հաւաք մը՝ յատկացած օդահէններուն, որոնք աւելի քան 3000 զոհ իյաւ էին, երբ օդանաւերը շախախտուած էին Նիւ Եորքի Առեւտրական Համաշխարհային Կէդրոնին, Փենթագոնին եւ Փենսիլվանիոյ մէջ:

Խմբակին բանբերը ըսած է, թէ իր կարծիքով աշխարհի տարածքին իսլամ համայնքը կը հատարայ, որ այդ 19 անձերը «հոյակապ էին»:

«Անոնք կը հաւատան, որ Սեպտեմբեր 11ին ի վեր տեղի ունեցած բազմաթիւ գործունէութիւններ ամբողջովին արդարանալի են իսլամական օրէնքին լոյսին տակ»:

Խմբակին ղեկավարը՝ Օմար Պաքրի Մոհամմադ, հերքած է, թէ ծրագրուած հաւաքը Սեպտեմբեր 11ի յարձակումներուն տօնախմբութիւնը պիտի կատարէ, ըսելով. «Անկա ղեկավար պատճառներուն հետախուզութիւնը պիտի կատարէ»:

ՊՈՒՇ ԿՈՉ Կ'ՈՒՂՂԵ...

Շարունակուած Ա. ԷջԸԸ

հին: Պուշ կ'ակնարկէր ՄԱԿի Պաշտատի կեդրոնատեղիին ոմբահարում:

Ուաշինկթըն, որ կը խոստովանի թէ չէ կրցած հակակշիռի տակ առնել Իրաքի մէջ ցարդ գործող ըմբուտ ուժերը, կ'ուզէ բանաձեւ մը վաւերացնել Ապահովութեան խորհուրդին մէջ՝ բազմապէս ուժ մը հաստատելու համար Իրաքի մէջ: Պուշ կ'ուզէ այս ձեւով թեթեւցնել ամերիկեան եւ բրիտանական ուժերուն բեռը, ինչպէս նաեւ՝ ծախսերը:

Ծոցի արաբական երկիրները իրենց կարգին երէկ կոչ ուղղեցին ՄԱԿի աւելի մեծ դեր տանձնելու Պաշտատի մէջ: Ծոցի Գործակցութեան խորհուրդի արտաքին գործոց նախարարներուն կողմէ հրապարակուած յայտարարութիւնը մտահոգութիւն կը յայտնէր նաեւ Իրաքի մէջ տիրող սահապահովութեան եւ անկայունութեան մասին:

ԻՐԱՔԻ ԻՃՆՈՂ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԼԻԿԱՅԻ ՄԵՋ ԻՐ ԱԹՈՈԸ Կ'ՈՒՂԵ

Իրաքի արտաքին գործոց նախարար Հոշիար Չեպատի երէկ Գահիրէի մէջ յայտարարեց, որ մտադիր է ամբողջական ու լիիրաւ անդամի մասնակցութիւն բերել Արաբական Լիկայի արտաքին գործոց նախարարներու ժողովին, շեշտելով, որ ամերիկեան հովանաւորութիւն վաւելող իշխող խորհուրդը արդարօրէն իրաւունք ունի գրաւելու Իրաքի վերապահուած աթոռը:

Չեպատի ըսաւ, որ իշխող խորհուրդը օրինական աներկայացուցիչն է Իրաքի, հետեւաբար արաբական մնացեալ երկիրներու ներկայացուցիչներուն համահաւասար են նաեւ անոր ներկայացուցիչները:

Արաբական երկիրներ ցարդ պաշտօնապէս ձանաչում չեն տուած իշխող խորհուրդին: Կարգ մը երկիրներ համաձայն են, որ խորհուրդի ներկայացուցիչները մասնակցիլ Լիկայի հանդիպումներուն, մինչ նորիշներ բացարձակապէս կը մերժեն, շեշտելով որ իրաքի ժողովուրդին կողմէ ընտրուած կառավարութիւն մը միայն կրնայ գրաւել Իրաքի աթոռը Լիկային մէջ:

● ԻՐԱՔԻ հիւսիսային շրջանին մէջ քարիւղի երկու հանքեր միացնող խողովակ մը խափանարարական արարքի թիրախ դարձաւ երէկ առտու: Պաշտօնական աղբիւր մը հաղորդեց, որ քարիւղատար խողովակին վրայ պայթում մը տեղի ունեցած է, Քերքուրի մօտ:

(ԱՅՓ)

ԻՐԱՆ ԿՈՐԻՉԱՅԻՆ ԻՐ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԵԱՆ ԱՄԲՈՂՋՈՒԹԻՒՆԸ ՊԵՏԵ Է ՅՍՏԱԿԱՅՆԷ

Կորիկային Ուժանիւթի Միջազգային Գործակալութեան ընդհանուր տնօրէն Մոհամէտ Պարատիի երէկ յայտնած է, թէ Իրան կորիկային իր գործունէութեան ամբողջութիւնը պէտք է յստակացնէ:

Ան կը խօսէր Վիեննայի մէջ, ՄԱԿի գործակալութեան կենսական մէկ ժողովին գումարումէն առաջ:

Մ. Նահանգներ կ'ըսեն, թէ Իրան գաղտնի ծրագիր մը ունի՝ կորիկային զէնքերու մշակումին համար: Անոնք կը պահանջեն, որ քայլերու դիմելի վայն կատեցնելու համար:

Պարատիի ըսած է, թէ Իրան նաեւ պէտք է ստորագրէ կորիկային զէնքերու տարածումը արգիւղ Էն. Փի. Թի. համաձայնագիրին կապուած յաւելեալ փրոթոգոլ մը, որ ՄԱԿի քննիչներու իրաւասութիւն պիտի տայ առանց նախօրօք տեղեակ պահած ըլլալու ստուգումներ կատարելու Իրանի կորիկային կեդրոններուն մէջ:

Պարատիի աւելցուցած է, որ ստուգումներու ձամբով «լաւ յառաջդիմութիւն արձանագրեցին»: Այսուհանդերձ, աշխատանքը տակաւին վերջ չէ գտած», շեշտած է ան, յայտնելով, որ Իրանի համար «կենսական է գործօն կերպով գործակցիլ եւ կարելի եղածին չափ կանխահասօրէն ամբողջական թափանցիկութիւն ցոյց տայ գործակալութեան»:

Ժողովին առաջ գործակալութեան մէկ տեղեկագիրը կ'ըսէր, թէ Իրան «հարստացած» իւրանիումի մասնիկներով վարակուած նիւթեր ունի:

Պաշտօնատարներու համաձայն, քննութիւնները կը շարունակուին եւ այլ տեղեկագիր մը պիտի ներկայացուի Նոյեմբերին:

Իրանի արտաքին գործոց նախարարը՝ Քամալ Խարապի, Շաբաթ օր յայտնած է, թէ Իսլամական Հանրապետութիւնը մօտ տունէն կրնայ հաւանութիւն տալ կորիկային աւելի խիստ քննութիւններու, եթէ հարցին գծով ՄԱԿի գործակալութեան հետ տեղի ունեցած բանակցութեանց «թիրմացութիւններու» վերջ տրուի:

ՈՒՒՍԻՈՅ ԵՒ ԻՐԱՆԻ ՄԻՋԵՒ ՍՕՏԱԼՈՒՑ ԸՍՏԱԶԱՅՆՈՒԹԻՒՆ ՄԸ

Միւս կողմէ, Ռուսիոյ կորիկային ուժանիւթի նախարար Ալեքսանտր Ռուսիանցեւ երէկ յայտնած է, թէ Մոսկուա եւ Թեհրան հաւանաբար մօտ տունէն պիտի լուծեն իրենց տարակարծութիւնները՝ բանալի համաձայնութեան մը գծով, ինչ որ կարելի պիտի դարձնէ ընթացքի մէջ դնել Իրանի կորիկային առաջին հնոցին աշխատանքը:

Ռուսիոյ օժանդակութեամբ կառուցուող Իրանի Պուշէհրի կորիկային գործարանին գծով համաձայնութեան մը մասին հարցերը «պուտ թեք» են. պէտք է որոշենք, թէ ո՞ր պայմանագրութիւնները ի՞նչ փոփոխութիւններու պէտք է ենթարկենք», ըսած է Ռուսիանցեւ՝ «Իթար-Թասս» լրատու գործակալութեան:

Արեւմտեան երկիրներ, յատկապէս Մ. Նահանգներ եւ Իսրայէլ, ունին այն մտավախութիւնը, թէ Պուշէհրի ծրագիրը կրնայ օժանդակել Իրանի՝ կորիկային զէնքերու ծրագիրի մը մշակման համար: Անոնք Ռուսիոյ կոչ ուղղած են չկրնել համաձայնութիւնը մինչեւ որ Իրան արտօսէ ՄԱԿի քննիչներուն կողմէ «բաց ստուգումները»:

Յայտնապէս զիջում կատարելով այդ մտահոգութիւններուն գծով, Ռուսիա անցեալ շաբաթ յայտարարած էր, թէ Պուշէհրի համաձայնութիւնը պիտի ուշանայ:


(ԱՅՓ)

ԱՊՊԱՍԸ ՓՈԽԱՐԻՆԱԾ ՔՈՐԷՅ ...

Շարունակուած Ա. ԷջԸԸ

ՓԱՌԸԼ ԿԸ ՍԵՐԺԵ ԲԱՆԱԿՅԻԼ ԱՐԱՖԱԹԻ ՇԵՏ

Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուըլը վերստին շեշտեց, որ թէեւ Ուաշինկթըն պիտի չբանակցի Եւրաֆաթի հետ, բայցեւայնպէս չ'ուզէր որ պաղեստինցի ղեկավարը արտաքսուի պ ա ղ է ս տ ի ն է ա ն շրջաններէն: Իսրայէլի բարձրաստիճան պաշտօնատարներ քանի մը օրէ ի վեր թափ տուած են Արաֆաթը արտաքսելու կոչերուն:



Փաուըլ ըսաւ, որ եթէ այս հանգրուանին Արաֆաթը արտաքսուի, ան պիտի գրաւէ միջազգային բեմերը: Փաուըլ աւելցուց, որ Ապպասի հրաժարականը պիտի չպարտադրէ, որ Ուաշինկթըն բանակցի Արաֆաթի հետ: Ըստ նախարարին, ամերիկացիները պիտի բանակցին պաղեստինցի վարչապետին հետ, ով պ ըլլայ ան, որովհետեւ Արաֆաթ խաղաղութեան ընկերակից չէ: Փաուըլ շեշտեց, որ պաղեստինցի վարչապետը պէտք է ըլլայ մէկը, որ պիտի հետապնդէ խաղաղութեան ձամբու քարտէսին գործողութիւնը:

Միւս կողմէ, Ֆրանսայի մէջ պաղեստինեան իշխանութեան ներկայացուցիչը՝ Լէյլա Շահին այսպէս Միացեալ Նահանգները, դիտել տալով, որ անոնք պատճառած են Ապպասի հրաժարիլը, որովհետեւ չեն գործադրած Իսրայէլի վրայ ճնշում բանեցնելու իրենց խոստումը: Շահին աւելցուց, որ Ապպաս հրաժարեցաւ, որովհետեւ յուսախաբ եղած ու յուսալքեցաւ խաղաղութեան ձամբու քարտէսը չկարենայ կիրարկելու համար: Քարտէսը գործադրութեան կը դրուի, եթէ ամերիկացիները իրենց խոստումները յարգէին, աւելցուց Շահին:

● ԿԱԶԱՅԻ մէջ տասը հոգի վիրաւորուեցաւ Կիրակի գիշեր, երբ իսրայէլեան երկու ուղղաթիռներ հրթիռներ արձակեցին «Համաս»ի հետեւորդի մը բնակարանին վրայ, յայտնեցին ակնատեսները:

● ԿԱԶԱՅԻ Իսրայէլի միացնող Էրէզ անցարգիլքին մօտ երէկ սպանուեցաւ զինեալ պաղեստինցի մը, որ ըստ իսրայէլեան աղբիւրներուն՝ իսրայէլացի զինուորի մը տարալը հագուած էր եւ վէնքը ուղղած զինուորներուն դէմ, որոնք հակադարձելով՝ սպանած են զայն:

● ՄՐԴԿԱՅԻՆ Իրաւանց պաշտօնական «Ըմբռնութիւններ»ի մէկ տեղեկագիրը կը գրէր, թէ Այսրոքանանի եւ Կապայի դէմ իսրայէլի կառավարութեան որդեգրած միջոցառումները աղէտալի կազմեցութիւն կ'ունենան շրջանի պաղեստինցի բնակչութեան վրայ՝ ստեղծելով յատկապէս տնտեսական ահաւոր դժուարութիւններ:

(ԱՅՓ)

ԻՐԱՔԻ ՄԵՋ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ ՄԸ ՊԵՏԵ Է ԱՍԵՐԻԿԵԱՆ ԳԼԽԱՎՈՐՈՒԹԵԱՄԲ ԲՈՒՆԱԳՐԱՌՈՂ ՈՒՇԵՐԸ ԱՐՏԱՔՍԷ

ԿԸ ՅԱՅՏԱՐԱՐԷ ՔԱՍՏԸ ԽԱՐԱԶԻ

ԳՄՄՍՍԿՈՍ, 8 (ԱՅՓ).- Իրանի արտաքին գործոց նախարար Քամալ Խարապի Երկուշաբթի օր յայտնած է, թէ Թեհրան կ'ուզէ, որ Իրաքի մէջ ժողովրդավարական կառավարութիւն մը աներկեան գլխաւորութեամբ բռնագրաւող ուժերը արտաքսէ:

Խարապի, որ կը խօսէր Գամակուսի մէջ Սուրիոյ նախագահ Պաշշար Ասատի եւ արտաքին գործոց նախարար Ֆարուք Շարէհի հետ տեսակցութենէ մը ետք, թղթակիցներու ըսած է, թէ կարելու է, որ իրաքցիք ժողովրդավար կառավարութիւն մը կազմեն եւ դրացի երկիրներուն հետ լաւ յարաբերութիւններ ապահովեն:

Ան յայտնած է, թէ այդ կառավարութիւնը պէտք է ձեռքապատի գրաւող ուժերէն եւ թէ իրաքցի ժողովուրդը իր հարցերը պէտք է տնօրինէ ՄԱԿի հովանաւորութեան ներքեւ:

Մ. Նահանգներ Սատամ Հիւսէյնի տապալումէն ի վեր (Ապրիլ 9) Սուրիոյ եւ Իրաքի վրայ մեծ ճնշումներ ի գործ դրած են, որպէսզի Իրաքի մէջ միջամտութիւն չկատարեն:

Նախապէս, Գամակուս հասնելէ անմիջապէս ետք, Խարապի ըսած է. «Սուրիոյ եւ Իրանի միջեւ մնալուն համակարգում մը կենսական է՝ Իրաքի եւ Պաղեստինի մէջ պարագայումներու լոյսին տակ»:

«Իրանեան եւ սուրիական կառավարութիւնները իրարու հետ սերտ կապեր ունին եւ համակարգուած ձեւով կ'աշխատին՝ տագնապը լուծելու եւ շրջանին մէջ ապահովութիւնը ամրապնդելու միջոցներ գտնելու համար», յայտնած է ան:

Խարապի հերքած է ամերիկեան այն անբաստանութիւնները, թէ Իրաքի մէջ վերջերս տեղի ունեցած յարձակումներուն ետին կանգնողները Իրանէն են: «Իրան բացարձակապէս չմիջամտեց իրաքեան հարցերուն», շեշտած է ան:

Ինչ կը վերաբերի արաբեւիսրայէլեան տագնապին, Խարապի Իսրայէլը Միջին Արեւելքի խաղաղարար գործընթացին «թիւ մէկ թշնամին» որակած է:

«Մինչեւ այն ատեն, որ Մ. Նահանգներ 100 առ հարիւր զօրավիգ կը կանգնին Իսրայէլի, չենք կրնար արդար եւ ամբողջական խաղաղութիւն ակնկալել շրջանին մէջ», ըսած է նախարարը, աւելցնելով. «Քաղաքական որեւէ ծրագիր չի կրնար յաջողիլ, եթէ նկատի չունենայ պաղեստինցի ժողովուրդին իրաւունքները»:

ԻՐԱՆ ԿԸ ՀԵՐՔԷ, ԹԷ «ՔԱՅԻՏԱ»Ի ԱՐԳԵԼԱՓՈՒՆԱԾ ԱՆԴԱՄՆԵՐՈՒ ԳԾՈՎ ՓՈԽԱՆԱԿՈՒՄՆԵՐ Կ'ԱՌԱՋԱՐԿԷ

Իրանի կառավարութիւնը երէկ հերքած է այն անբաստանութիւնները, թէ կ'առաջադրէ «Քայիտա» ցանցի երկրին մէջ արգելափակուած ենթադրեալ անդամներ փոխանակել:

Կառավարութեան բանբերը՝ Ապտոլլա Ռամազանի, թղթակիցներու յայտնած է, թէ Իրան որեւէ երկրի փոխանակման համաձայնութիւն չէ առաջարկած, աւելցնելով. «Ահաբեկչութեան դէմ պայքարը մեր թիրախներէն մէկն է, որովհետեւ ահաբեկչութեան ցոյց տրած է»:

Լուսարձակներէ հետո, շաբթ մը դիւանագետներ ըսած են, թէ Իրան կը փորձէ «Քայիտա»ի անդամ փախստականներ փոխանակել ընդդիմադիր Մուճահիդին խալիք շարժումին արգելափակուած անդամներու հետ:

Կիրակի օր, գերմանական «Վէլթ ամ Սոնթալ» թերթը հաղորդած է, որ Թեհրան Մ. Նահանգներու նման առաջարկ կատարած է:

Իրան խոստովանած է, թէ «Քայիտա»ի անդամներ, ներառեալ ղեկավար ղեմերը, արգելափակած է, սակայն անկա մերժած է անոնց ինքնուրիշը յայտնել:

ՍՊԱՆԻՈՅ ՄԵՋ ԱԼԼՈՒՆԻ ԸԱՐՅԱՔՆՆՈՒԹԵԱՆ ԿՆԵՆՈՒՄԻՆ

Միւս կողմէ, Ապախիոյ մէջ դատական աղբիւրներ յայտնած են, թէ ահաբեկչութեան դէմ պայքարող երկրին ամենէն բարձրաստիճան դատաւորը՝ Ալաթաւար Կարտու, երէկ հարցաքննուած է պատկառաւորի «Ժապիրա» կայանին մէջ թղթակցը՝ «Քայիտա» ցանցին հետ կապեր ունենալու կասկածներով:

Թայպիլ Ալլուի անցեալ շաբաթ ձեռքաւարտած էր Ապախիոյ հարաւային Կրանատա նահանգին մէջ, ձեռքաւարելու Կարտուի հրահանգէն ետք:

Ոստիկանական աղբիւրներու համաձայն, անոր ձեռքաւարութիւնը իսլամական ծայրախելական գործողութիւններու շուրջ աւելի յայնաժիր հետաքննութիւններու արշաւին մէջ կ'իյնայ:

«Ժապիրա» ուժգին բողոքած է ձեռքաւարութեան դէմ: Իր ստղծ-թղթակիցներէն հանդիսացող Ալլուի 2 տարի առաջ Սեպտեմբեր 11ի յարձակումներէն ետք կրցած էր «Քայիտա»ի ղեկավար Ռուսամ Պըն Լատէնի հետ հարցազրոյց մը ապահովել:

Շարունակուած Ա. ԷջԸԸ

առումով անհրաժեշտ նկատուեցաւ իրաւապայմանագրային յարաբերութիւններու կատարելագործումը: Ներկայիս տակալ 34 երկրորդմանի փաստաթուղթերուն (որոնցմէ 18 կը վերաբերին տնտեսական մարզին) պիտի աւելնան ընկերային ապահովութեան նախաձեռնութիւններու, ներդրումներու, պաշտպանութեան, մուտքի արտօնագիրներու դիրքամաս առկայութեամբ պայմանագիրները:

Նախագահ Քոչարեան նաեւ ելոյց ունեցաւ հայ էկոլոգիկ գործարարներու խորհրդատողի փակման հանդիպումին ընթացքին: